ՄԱՀԿԱՆԱԲԵՐԴՑԻՆԵՐԻ (ՍԱԴՈՒՆԵԱՆՆԵՐԻ) ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՒՆԸ ԺԲ.—ԺԴ. ԴԱՐԵՐՈՒՄ

ՀԱՅՐԱՊԵՏ Գ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Մահկանաբերդցիների տոհմը պատուաւոր տեղերից մէկն է գրաւեցնում ԺԲ.—ԺԴ. դարերի Հայաստանի աւատատիրական աւագանին ներկայացնող ընտանիքների շարքում։ Այս իշխանական տան առաւել հզօրութեան փուլերում նրա անդամների ազդեցութեան սահմանները դուրս էին գալիս Հայաստանի շրջանակներից, իսկ ԺԴ. դարի 70—80ական թուականներին Մահկանաբերդցիները ակնառու դեր էին կատարում նաեւ Արեւելեան Վրաստանի ճակատագրում։ Տոհմի պատմութիւնը, Հայաստանի եւ Վրաստանի ԺԲ.—ԺԴ. դարերի քաղաքական առանցքային անցուդարձերի անքակտելի մասը կազմելով, առաջին հերթին ուշագրաւ է առանձին իշխանական տների բարձրացման ու անկման պատճառների եւ ուղիների պարզաբանման, թագաւորական իշխանութեան եւ խոշոր աւատատէրերի փոխյարաբերութիւնների տրամաբանութեան բացայայտման տեսանկիւնից։ Առանձնայատուկ հետաքրքրութիւն է ներկայացնում նաեւ Մահկանաբերդցիների ինքնատիպ էթնոմշակութային դիմապատկերի հետազօտութիւնը։ Դժուար է մատնացուցել դարաշրջանի մէկ այլ հայկական տոհմ, որը այդչափ աչքի ընկնի տարբեր էթնիկական, դաւանական ու մշակութային աշխարհների հետ սերտ շփումներով ու կապերով։ Այս ամէնն էլ խիստ ցանկալի է դարձնում Մահկանաբերդցիների իշխանական տան պատմութեան համակողմանի ուսումնասիրութիւնը։

Թերեւս Մահկանաբերդցիների պատմութեան կարեւոր առանձնայատկութիւնն է՝ յաճախ Հայաստանից դուրս գործելու հանգամանքը, որ պայմանաւորել է հայագէտների համեմատաբար համեստ հետաքրքրութիւնը տոհմի գործունէութեան նկատմամբ։ Հայագիտութեան մէջ միայն Սուրէն Երէմեանն է առանձին աշխատութեամբ անդրադարձել Մահկանաբերդցիների պատմութեանը. սակայն ռուսերէն գրուած այդ հետազօտութիւնը մնացել է անտիպ, թէեւ նրանից յաճախ

են օգտուել ուսումնասիրողները[1]։ Վրացագէտները, իրենց հերթին, զբաղուել են գլխաւորապէս ԺԳ. դարի երկրորդ կէսի Մահկանաբերդցիների գործունէութեան հետազօտութեամբ։ Տոհմի պատմութեան ԺԲ. դարի ժամանակահատուածը սակաւ չափով է ուսումնասիրուել վրացագիտութեան մէջ, քանի որ առաջին Մահկանաբերդցիների պատմութիւնն արտացոլող հայկական աղբիւրները համեմատաբար ուշ են գրաւել վրացագէտների ուշադրութիւնը։ Մահկանաբերդցիների պատմութիւնը վերջին տարիներս զբաղեցրել է արտերկրի կովկասագէտներին, սակայն Կիրիլ Թումանովի[2] եւ Բ. Լիմպէրի[3] աշխատութիւններում միայն ընտանիքի տոհմածառը վերականգնելու փորձեր են ձեռնարկուած. իշխանական տան ուղին եւ ճակատագիրը ներկայացնելու եւ վերլուծելու խնդիր՝ այդ հետազօտողներն իրենց առջեւ չեն դրել։

Ելնելով ԺԲ.—ԺԴ. դարերի հայ աւատատիրական աւագանու քաղաքական, սոցիալական եւ էթնոմշակութային պատմութեան ուսումնասիրման առանցքային խնդիրներից՝ ստորեւ հարկ եմ համարում անդրադառնալ մի շարք հարցերի, որոնց լուսաբանութիւնը հնարաւորութիւն կարող է ընձեռել բազմակողմանի եւ ընդգրկուն պատկերացում կազմել տոհմի պատմութեան մասին։

Ա. ՏՈՀՄԻ ԱՆՈՒԱՆՈՒՄԸ ԵՒ ԾԱԳՈՒՄԸ

Տոհմի անուանման հարցը գիտական գրականութեան մէջ դեռեւս յատուկ քննութեան նիւթ չի դարձել։ Այժմեան հայագիտական հետազօտութիւններում ընտանիքն առաւել յայտնի է «Մահկանաբերդի Արծրունիներ» անուանումով։ Այն շրջանառութեան մէջ է մտցրել Երէմեանը, որին հետեւել են յաջորդ ուսումնասիրողները։ Աւելի վաղ հայագէտները տոհմի անդամներին կոչում էին Արծրունիներ, առանց որեւէ մասնաւորեցման[4]։ Վրացագէտները, աւանդաբար, «Մահկանաբերդցի» են կոչում միայն Սադուն Բ.-ին եւ Խութլու Բուղային։ Միայն վերջերս են նրանք սկսել, հայագիտական գրականութեան ազդեցութեամբ, «Արծրունի» անուանել տոհմի վաղ շրջանի ներկայացուցիչներին՝ Ամիր—Քրդին եւ Վասակին[5]։ Ամբողջ տոհմի միասնական անուանման հարցը նրանց ընդհանրապէս չի զբաղեցրել։

Ելնելով այն իրողութիւնից, որ տոհմի գործունէութեան դարաշրջանի մեծ մասում (հնարաւոր է՝ բացառութեամբ ԺԳ. դարի վերջից սկսուած եզրափակիչ փուլի, որի մասին տեղեկութիւնները բացակայում են) նրանց էր պատկանում Մահկանաբերդ ամրոցը՝ շրջակայ գաւառով հանդերձ, բաւարար հիմք գոյութիւն ունի ընտանիքը «Մահկանաբերդցի» կոչելու համար։ Ճիշդ է, այն վկայուած է վրացական աղբիւրում[6], բայց լիովին հնարաւոր է նրա գործածականութիւնը նաեւ հայկական միջա-

վայրում։ Պէտք է հաշուի առնել, որ տոհմային կալուածքի, եւ յատկապէս բերդի, անուանումից կազմուած տոհմանունները ամենեւին էլ խորթ չեն եղել ԺԲ.–ԺԴ. դարերի հայ իրականութեանը։ Մասնաւորապէս՝ պատմիչներից միայն Ստեփանոս Օրբելեանը վկայում է «Գագեցի», «Գեռաքարեցի», «Մածնաբերդեցի», «Առփայեցի», «Տաշրացի», «Կայենեցի», անուանումների տարածուած լինելը նշուած ժամանակաշրջանում[7]։ Խօսուն են նաեւ փաստաթղթերի, վիմագիր արձանագրութիւնների եւ ձեռագրերի յիշատակարանների հաղորդումները, որոնցում յիշատակւում են «Ալվեցի»[8], «Շահռուեցի»[9] տոհմանունները։

Օրբելեանը միաժամանակ հաղորդում է Մահկանաբերդցիների տոհմի այն անուանումը, որը գործածական էր դարձել նշանաւոր Սադուն Բ.-ի գործունէութեան համընդհանուր ճանաչում ստանալու հետեւանքով՝ «զորդիսն Սադուն աթաբէկին»[10]։ Տոհմի «Սադունեաններ» անուանումը եւս նոյնքան ընդունելի կարող էր դիտուել, որքան «Մահկանաբերդցիներ» կոչումը, բայց քանի որ առաջինը բացարձակապէս չի գործածւում գիտական գրականութեան մէջ, ապա մնում է դիմել աւելի ծանօթ երկրորդ անուանաձեւին, կամ զուգահեռաբար գործածել երկուսն էլ[11]։ Ինչ վերաբերում է ընտանիքի «Արծրունի» անուանմանը, ապա, ինչպէս ցոյց է տրուելու ստորեւ, այս իշխանական տան արծրունիական տոհմակունքների վարկածը հնարաւոր չէ ապացուցուած համարել։

Միեւնոյն գերդաստանի առանձին տոհմաճիւղն էին ներկայացնում Ամիր–Քրդի եղբայր Սարգսի սերունդները՝ Խաւասեանները, որոնք ԺԳ. դարի առաջին կէսում, հեռանալով Մահկանաբերդից, կապուել էին Լոռէ քաղաքի իշխան Շահնշահ Ա. Զաքարեանի[12] հետ եւ կալուածքներ էին ձեռք բերել նրան պատկանող տարածքներում։ Ուստի այս երկու ընտանիքներին «Մահկանաբերդցիներ» կամ «Սադունեաններ» միասնական անուանման ներքոյ միաւորելը պայմանական բնոյթ է կրում։

Մահկանաբերդցիների տոհմական ծագման հարցը քննելիս առանձնայատուկ ուշադրութեան է արժանի այդ խնդիրն արծարծող հաղորդումների ժամանակագրութեան յստակեցումը։ Հայկական սկզբնաղբիւրներից Պատմութիւն վասն ազգին Նետողաց երկի հեղինակը Սադուն Բ.-ին «Արծրունի» է կոչում ԺԳ. դարի 60–70 ական թթ. դէպքերի առընչութեամբ[13], իսկ ԺԳ. դարի մատենագիր Մխիթար Այրիվանեցին՝ այդ նշանաւոր գործչի մահուան յիշատակութեան առիթով[14]։ Մինչդեռ գերդաստանի ԺԲ. դարի եւ նոյնիսկ ԺԳ. դարի 60ական թթ. առաջին կէսի պատմութեանը քաջատեղեակ հայ հեղինակները՝ ԺԲ. դարի հեղինակ Մխիթար Գոշը, ԺԳ. դարի պատմագիրներ Վարդան Արեւելցին եւ Կիրակոս Գանձակեցին լռութեան են մատնում տոհմի առաջին ներկայացուցիչների տոհմական պատկանելիութեան հարցը։ Նոյնը կարելի է ասել

վրացական աղբիւրների եւ Մահկանաբերդցիների թողած բաւականաչափ հարուստ վիմագիր եւ յիշատակարանային ժառանգութեան մասին։ Ուստի Պատմութիւն վասն ազգին Նետողացի եւ Այրիվանեցու հաղորդումները՝ Մահկանաբերդցիների արծրունիական ծագման վերաբերեալ, լրացուցիչ հիմնաւորման կարիք են զգում։ Այդ ուղղութեամբ միակ փորձն առայժմ ձեռնարկել է Երէմեանը, որի կարծիքով Արծրունիների այդ տոհմաճիւղին Հիւսիսային Հայաստան է տեղափոխել վրաց թագաւոր Դաւիթ Շինողը՝ (1089—1125) չնորհելով Մահկանաբերդը[15]։ Յիրաւի, մահուանից քիչ առաջ, 1124 թ., Դաւիթ Շինողը հնարաւորութիւն ստացաւ տնօրինելու Մահկանաբերդի ճակատագիրը եւ, հաւանաբար, այն յանձնել է հայ իշխանի։ Սակայն Երէմեանի տեսակէտը կռահում է մնում մի կարեւոր կէտում. անհասկանալի է, թէ ի՛նչ հիմք գոյութիւն ունի ամրոցն ստացած իշխաններին Արծրունի համարելու համար։ Բոլոր դէպքերում, Արծրունիների հետ առընչակցութիւն չեն յիշատակում ո՛չ ժամանակակից հեղինակները եւ ո՛չ էլ Մահկանաբերդցիների ընտանիքի անդամները։ Ինչպէս ուղղակի ազգակցութիւն հաւաստող, այնպէս էլ խնամիական կապ մատնանշող փաստերի բացակայութեան պարագայում, դժուար է նոյնիսկ ենթադրել, թէ ի՛նչն է ազդակ ծառայել հենց Արծրունիների հետ տոհմակցութիւն փնտռելու համար։

Թերեւս կարելի է անել հետեւեալ կռահումը։

Յատուկ ծագումնաբանութիւն մշակելու կարիք՝ Մահկանաբերդցիները պէտք է զգային ԺԳ. դարի 60—80ական թթ., երբ հրապարակի վրայ էին Սադուն Բ.ն եւ նրա որդի Խութլու Բուղան։ Եւ պատահական չէ, որ այդ ժամանակահատուածով են թուագրւում տոհմի արծրունիական ծագման մասին հայ պատմիչների վկայութիւնները, ինչպէս նաեւ Սադուն Բ.ի դուստր Վանենիի յիշատակութիւնը «թագաւորազն» մակդիրով[16]։ Եթէ հաշուի առնենք, որ հայկական ամենանշանաւոր տոհմերը՝ Արշակունիները եւ Բագրատունիները արդէն հռչակուել էին համապատասխանաբար Պահլաւունիների եւ Զաքարեանների նախահայրեր, ապա թագաւորական յաջորդ եւ առաւել հեղինակաւոր տոհմը ներկայացնում էին Արծրունիները։ Մահկանաբերդցիներին եւ Արծրունիներին միմեանց կապելու համար, այնուամենայնիւ, պէտք է հիմնուել որեւէ իրական փաստի վրայ։ Թւում է, Արծրունիներ—Մահկանաբերդցիներ առընչակցութեան հիմնաւորման համար ատաղձ է ծառայել հետեւեալ իրողութիւնը։ Յայտնի է, որ Սադուն Բ.ն, մօտաւորապէս 1260թ. միջնորդի դեր ստանձնեց մոնղոլների ու սասունցիների միջեւ եւ նշանակուեց Սասունի կառավարիչ[17]։ Թէեւ նա երկար չի կառավարել Սասունում, այնուամենայնիւ հնարաւոր է, որ այդ միջադէպի ազդեցութեամբ նրա տոհմը կապուել է Արծրունիների հետ։ Ինչպէս երեւում է, այս անգամ եւս վճռորոշ

դեր են կատարել Մովսէս Խորենացու Հայոց պատմութիւնից (Ե. դար) բխող պատկերացումները։ Յայտնի է, որ Պատմահայրը Ասորեստանի Սենեքերիմ արքայի որդիներից է սերուած համարում Հայկական Տաւրոսին տիրող իշխանական տների մեծ մասին, այդ թւում նաեւ Արծրունիներին[18]։ Հետեւաբար, նաեւ մատենագրական հիմք է գոյութիւն ունեցել Սասունի նորայայտ տիրակալի տոհմակունքները Հարաւային Հայաստանում փնտռելու եւ Մահկանաբերդցիներին Արծրունիներին առընչակցելու համար։ Բայց եւ այնպէս, Մահկանաբերդցիների արծրունիական ծագման տեսակէտը կենսունակ չի գտնուել եւ անհետացել է տոհմի հզօրութեան վերջնական կորստի հետ միաժամանակ։ Այսպիսով, Մահկանաբերդցիների տոհմակունքների հարցը առայժմ բաց է մնում եւ կարող է վերջնականապէս լուսաբանուել նոր սկզբնաղբիւրների ի յայտ գալու պարագայում։

Մահկանաբերդցիների ընտանիքի պատմութեանը բաւարար չափով տեղեակ չլինելու հանգամանքով պէտք է բացատրել Ի. Ջաւախիշվիլու այն կարծիքը, որի համաձայն Սադուն Բ.ի նախնիները եղել են հայացած քրդեր[19]։ Ինչպէս երեւում է, այդ կռահումն անելիս գիտնականն առաջին հերթին հիմնուել է «Քուրդ» անձնանուան առկայութեան վրայ տոհմում։ Բայց պէտք է ենթադրել, որ Ջաւախիշվիլու տեսակէտի ձեւաւորման հարցում որոշակի դեր է խաղացել նաեւ Սադուն Բ.ի գործունէութեան եւ անձնաւորութեան այն խիստ բացասական բնութագիրը, որով Մահկանաբերդի տիրոջը օժտել է հետազօտողը։ Նրա գնահատմամբ, Սադուն Բ.ն ներկայանում է որպէս անսկզբունքային եւ ապազգայնացած անձնաւորութիւն։ Սակայն կովկասագիտութեան զարգացման ներկայ փուլում ակնյայտ է, որ էթնիկական անուանումից սերող անձնանունների հիման վրայ որեւէ տոհմի ծագման մասին ենթադրութիւններ անելն առաւել քան խոցելի է։ Մասնաւորապէս, «Քուրդ» անձնանունը լայնօրէն տարածուած էր հայկական իշխանական տներում ինչպէս նախորդ ժամանակաշրջանում (առաջին վկայութիւնները Ը. դարից են), այնպէս էլ յատկապէս ԺԲ.—ԺԳ. դարերում[20]։

Յատկանշական է, որ տոհմի առաջին ներկայացուցիչները կրում էին ընդգծուած հայաշունչ անուններ (Վահրամ, Վասակ, Սարգիս, Սահակադուխտ), բայց դրանք սկսել են օտարահնչուն դառնալ արդէն ԺԲ. դարի երկրորդ կէսում եւ տիրապետող են ամբողջ ԺԳ. դարի ընթացքում։ Միաժամանակ աստիճանաբար յաճախակի են դառնում այլազգիների հետ ամուսնութիւնները եւ առընչութիւնները նաեւ քաղկեդոնական հոգեւոր կենտրոնների։ Որ Մահկանաբերդցիների գլխաւոր տոհմաճիւղի էթնիկական դիմանկարում ոչ—հայկական տարրերը առաջին հերթին պայմանաւորուած էին օտար միջավայրում գործելու հանգամանքով՝

երեւում է միայն Հայաստանում գործունէութիւն ծաւալած կրտսեր տոհմակիցների՝ Խաւռասեանների օրինակից։ Ահա թէ ինչպէս է բնութագրում այդ տոհմաճիւղի հիմնադիր Խաւռաս Ա.ի հաւատարմութիւնը նախնեաց հայկական արմատներին՝ 1232 թ. գրուած Բագնայրի աւետարանի գրիչ Իգնատիոսը. «աստուածասէր եւ բարեպաշտ, քաջահաւատ եւ գովելի ի մրցմունս արիութեան՝ հանգոյն քաջ նախնեացն իւրոց նահատակեալ ի վերայ տանն Հայոց, մեծապատիւ իշխանաց իշխանն պատրոն Խաւռաս, որդի Ամիր Սարգսի» (ընդգծումը իմն է — Հ.Մ.)։ Խիստ ուշագրաւ է, որ Խաւռաս Ա.ն արդէն երկրորդ սերնդի քաղկեդոնական, ամիրսպասալար Զաքարիա Գ. Զաքարեանի (1230—1263) դաստիարակն էր, բայց իր սանին սնուցանում էր հայրենական աւանդոյթների, այսինքն՝ հայկական ոգով. «դաստիարակելով եւ սնուցանելով ամենայն երկիւղիւ եւ աստուածապաշտութեամբ, զոր ի նախնեացն ուսեալ էր» (ընդգծումը իմն է — Հ.Մ.)[21]։ Հետաքրքրականն այն է, որ Խաւռաս Ա.ն երկիցս ամուսնացել էր «պարսիկ» իշխանադուստրերի հետ, բայց վերջիններս շտապել էին քրիստոնէութիւն ընդունել[22]։

Այսպիսով, փաստերը խօսում են Մահկանաբերդցիների սկզբից եւեթ հայ լինելու եւ միայն յետագայում, այն էլ ոչ անվերադարձ, էթնոմշակութային դիմապատկերում որոշ խաթարում կրելու մասին։

Ուշագրաւ է Մահկանաբերդցիների սոցիալական բարձր կարգավիճակ ունենալը դեռեւս ԺԲ. դարի երկրորդ քառորդում եւ, հնարաւոր նոյնիսկ, աւելի վաղ ժամանակներում։ Նրանք «իշխան» են անուանւում առաջին յիշատակութիւնից[23] ի վեր եւ, անշուշտ, աւելի վաղ եւ անմիջական յարաբերութիւններ են հաստատել Տփխիսի եւ վրաց արքունիքի հետ, քան Զաքարեանները։

Հետեւաբար, Մահկանաբերդցիների (Սադունեանների) տոհմի հայկական եւ բարձր ծագումը հաւաստի իրողութիւն է։

Բ. ՄԱՀԿԱՆԱԲԵՐԴՑԻՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Տոհմի պատմութեան մէջ ակնյայտօրէն առանձնանում են բարձրացման երկու փուլեր։

Առաջինի պայմանական սկիզբ կարելի է համարել 1124 թ., երբ վրացական բանակը հաստատուեց Անիում եւ Հիւսիսային Հայաստանի մի շարք ամրոցների թւում նաեւ Մահկանաբերդում[24]։ Այդ կամ յաջորդ մի քանի տարիների ընթացքում էլ, պէտք է ենթադրել, սկիզբ են առել վրացական արքունիքի եւ Մահկանաբերդցիների տոհմի առաջին (մեզ յայտնի) ներկայացուցիչ Վահրամ իշխանի փոխյարաբերութիւնները։ Եթէ նկատի առնենք, որ Մահկանաբերդը կարող էր վրաց թագաւորութեան սահման-

ների մէջ մտցուել 1124 թ. Մայիս–Օգոստոսին, իսկ Դաւիթ Շինողը մահացաւ 1125 թ. Յունուարին[25], ապա Մահկանաբերդի տէրերը ազդեցութիւն եւ դիրք են ձեռք բերել վրաց արքունիքում Դեմետրէ Ա-ի (1125–1155/56) օրօք։ Արդէն ԺԲ. դարի կէսերին նրանք հասցրել էին գրաւել Տփխիսի քաղաքապետի պաշտօնը, այսինքն՝ նրանց բարձրացումը բաւականաչափ արագ էր տեղի ունեցել։ Վրաց արքունիքում ձեռք բերած դիրքով Մահկանաբերդցիները ԺԲ. դարի առաջին կէսին իրենց հաւասարը չունէին հայկական ընտանիքների շարքում եւ այդ առումով Զաքարեանների նախորդները կարող են համարուել։ Ուստի Մահկանաբերդցիների եւ Զաքարեանների միջեւ խնամիական կապի հաստատումը շուրջ 1150 թուականին կամ մի փոքր աւելի վաղ՝ միանգամայն օրինաչափ իրողութիւն է ներկայանում։

Առայժմ գիտական գրականութեան մէջ առաջին փորձերն են կատարուել պարզաբանելու այն լծակները, որոնց շնորհիւ իրականացել է Մահկանաբերդցիների առաջին բարձրացումը։ Մասնաւորապէս, Երէմեանը շեշտել է Ամիր–Քրդի կապերը առեւտրա–վաշխառուական շրջանների հետ[26]։ Հետազօտողներից Ի. Անթելաւան կարծիք է յայտնել, որ Մահկանաբերդցիների խոշոր աւատատիրական տոհմի ներկայացուցիչների նշանակումը Տփխիսի քաղաքապետի պաշտօնում պայմանաւորուած է եղել թագաւորական իշխանութեան հետապնդած քաղաքական ու տնտեսական նպատակներով։ Նա այն միտքն է զարգացրել, որ Մահկանաբերդցիներ Վասակի եւ Ամիր–Քրդի նշանակման հարցում կարեւոր դեր են խաղացել նրանց սերտ կապերը առեւտրատնտեսական խոշոր նշանակութիւն ունեցող Կարին քաղաքի հետ[27]։ Ի լրացումն այս կապակցութեամբ յիշատակուած փաստերի՝ արժէ նշել, որ Մահկանաբերդցիներին պատկանող տարածքներով էին անցնում Տփխիսը Կուրի հովտի, Աղուանքի, Հայաստանի ու Իրանի հետ կապող բանուկ առեւտրական ուղիներ[28]։

Մահկանաբերդցիների առաջին բարձրացումն ապահովող գործօնների շարքում, թւում է, որոշակի դեր են կատարել տոհմի անդամների զօրավարական կարողութիւնները։ Այսպէս, ստոյգ յայտնի է, որ Վասակն ու Ամիր–Քուրդը, վարչական բարձր դիրք զբաղեցնելով հանդերձ, ռազմական աչքի ընկնող գործիչներ էին։

Այն իրողութիւնը, որ Տփխիսի կառավարչի պաշտօնը կորցնելուց յետոյ Մահկանաբերդցիները ԺԲ. դարի 90ական թթ. հզօրութեան անկում ապրեցին, համոզիչ կերպով վկայում է, թէ համեմատաբար փոքր հողային տիրոյթներ ունեցող Մահկանաբերդցիների համար կառավարման համակարգում բարձր դիրք գրաւելը կենսականօրէն կարեւոր էր։ Վարչական գործառոյթը բնութագրական էր մնում Մահկանաբերդցիների համար նաեւ ԺԳ. դարի առաջին կէսում, սակայն այն անհամեմատ համեստ դիրք

էր ապահովում։ Այսպէս, Խաւռասեանները վարում էին Շահնշահեան տան մսախուրթուխուցէսի (ծառայողապետի) պաշտօնը, իսկ ընտանիքի աւագ տոհմաճիւղի անդամները վարչական ծառայութեամբ կապուած էին Աւագեան տան հետ։ Այսպիսով, Մահկանաբերդցիների առաջին բարձրացմանը (1124—1180ական թուականների վերջ) յաջորդեց վայրէջքը, որը տեւեց շուրջ եօթ տասնամեակ։

Եթէ Խաւռասեանները ԺԳ. դարի 60ական թուականներից դադարեցին որեւէ նշանակալի դեր կատարելուց, ապա հենց այդ տասնամեակում սկսուեց աւագ տոհմաճիւղի սրընթաց բարձրացումը։ Եւ դարձեալ Մահկանաբերդցիների վերելքը պայմանաւորուած էր ոչ թէ նրանց քաղաքական, ռազմական կամ տնտեսական հզօրութեամբ, այլ յաջողակ վարչական ծառայութեամբ ու իլխանութեան վարչա—բիւրոկրատական վերնախաւի հետ կապերով, ինչպէս նաեւ անձնական յատկանիշերով։ Սադուն Բ.-ի շեշտակի բարձրացման գործում որոշակի դեր խաղաց նաեւ տարածաշրջանում առաջացած ռազմա—քաղաքական իւրօրինակ կացութիւնը, մոնղոլական տիրապետութեան առանձնայատուկ մթնոլորտը։ ԺԳ. դարի երկրորդ կէսում ինչպէս իշխանութեան կենտրոնում, այնպէս էլ ծայրամասերում որոշ անձնաւորութիւնների ու տոհմերի առաջին պլանում յայտնուելը եւ ապա գահավէժ կործանուելը առօրէական երեւոյթ էին եւ բացատրւում էին մոնղոլական քոչուորական աւագանու նպատակաուղղուած քաղաքականութեամբ։ Ստեղծելով ուժերի այնպիսի հաւասարակշռութիւն, որը չափազանց անկայուն էր եւ ցանկացած պահին կարող էր խախտուել որեւէ կողմի նախայարձակ գործողութիւններով, մոնղոլական իշխանաւորները մշտական լարուածութեան մէջ էին պահում նուաճած երկրները։ Վրացական թագաւորութիւնում եւս մոնղոլները նոյնատիպ իրադրութիւն էին ստեղծել եւ խրախուսում էին կենտրոնական իշխանութեանը ընդդիմադիր ուժերի հանդէս գալը։ ԺԳ. դարի 70—80ական թուականներին Սադուն Բ.-ն եւ Խութլու Բուղան էին մոնղոլական քաղաքականութեան գործուն իրականացնողները եւ սատարւում էին ոչ միայն մոնղոլական ամենաբարձր վերնախաւի, այլեւ իշխանութեան փաստական կառավարիչ Սահիբ Ջուվէյնու ու անձամբ իշխանների կողմից։ Սակայն թագաւորական իշխանութեանը հակադիր նոր եւ հզօր քաղաքական ուժի երկարատեւ գոյութիւնը եւս չէր մտնում մոնղոլների քաղաքական ծրագրերի մէջ. նրանք ակնյայտօրէն գերադասում էին ասպարէզը տրամադրել ժամիշխանների մրցակիցներին եւ այդպիսով դիւրութեամբ վերահսկել իրադրութիւնը։ Նման պայմաններում Մահկանաբերդցիների ճակատագիրը կանխորոշուած էր եւ նոյնպիսի արագութեամբ նրանք կարող էին անյայտութեան գիրկը անցնել իշխանութեան կենտրոնում անընդհատ տեղի ունեցող քաղաքական

ցնցումների որեւէ մէկի հետեւանքով։ Հենց այդ էլ վերջիվերջոյ կատարուեց ԺԳ. դարի եզրափակիչ տասնամեակում, 1293 թ. Խութլու Բուղայի մահապատժից յետոյ։ Այսպիսով, Մահկանաբերդցիների երկրորդ բարձրացումը տեւեց շուրջ երեք տասնամեակ եւ անակնկալ կերպով ընդհատուեց։ Այս անգամ, սակայն, տոհմի դիրքերը խարխլուեցին վերջնականապէս։ Հողային տարածքների կորուստը, առաւել եւս քաղաքների յարքունիս գրաւումը, անվերադարձօրէն զրկեցին Մահկանաբերդցիներին նոյնիսկ Հայաստանում նախկին դիրքը պահպանելու հնարաւորութիւնից։ Սկզբնաղբիւրներում վերջին անգամ յիշուելու ժամանակաշրջանում (1367 թ.) նրանք արդէն վերածուել էին չարքային հողատէրերի։

Գ. ՏԻՐՈՅԹՆԵՐԸ ԵՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ

Մահկանաբերդցիների բուն տիրոյթները գտնուում էին Աղստեւ գետի հովտում, Մահկանաբերդի գաւառում[29]։ ԺԲ. դարի 50–70ական թթ. Վասակն ու Ամիր–Քուրդը կալուածքներ ունէին Կարնոյ երկրում։ Այդ տարածքների յետագայ ճակատագիրը չի լուսաբանուում սկզբնաղբիւրներում, սակայն Խաւռաս Ա.ի ամուսնական կապերը մահմեդական աշխարհի հետ եւ արեւելեան անունների տարածուածութիւնը տոհմում մտածել են տալիս, որ Մահկանաբերդցիները վերջնականապէս չէին խզել աղերսները իրենց հեռաւոր տիրոյթների հետ։ Տոհմի անդամների տարածքային կապերը չափազանց ընդգրկուն էին ԺԳ. դարի երկրորդ կէսում։ Խաւռասեանները գործում էին Արագածոտնում եւ Շիրակում։ Նրանք գանձագին գիւղ ունէին Արագածոտնում (Աշնակ), հասութաբեր ձեռնարկութիւն՝ Անիի մերձակայքում (Տիգնիս), հնարաւոր է նաեւ այլ տիրոյթներ՝ Շահնշահեանների տան սահմաններում։ Ինչ վերաբերում է Սադուն Բ.ին եւ Խութլու Բուղային, ապա նրանք ընդարձակեցին իրենց տիրոյթները նախ ի հաշիւ Զաքարեանների, ապա նաեւ՝ վրաց արքաների։ ԺԳ. դարի 60ական թուականների վերջում Սադուն Ա.ին էր պատկանում մինչ այդ Շահնշահ Ա.ի սեփականութիւնը կազմող Աշտարակը[30]։ Այստեղ Մահկանաբերդցիները պահպանել էին իրենց իշխանութիւնը նաեւ Խութլու Բուղայի օրօք, գոնէ մինչեւ 1285 թուականը[31]։ Սակայն Աղբուղա Բ. Զաքարեանի արձանագրութիւնների առկայութիւնը Աշտարակում[32] ԺԴ. դարի առաջին տասնամեակներին՝ ցոյց է տալիս, որ Զաքարեանները վերականգնել են դիրքերը Արագածոտնի այդ մասում։ Հայր ու որդի Մահկանաբերդցի իշխանները վրաց արքաներից ժամանակաւորապէս տիրացել էին Կարսին, Դմանիսին, Թելաւին, Բելաքանին[33]։ Սադուն Բ.ն մոնղոլների կողմից որոշ ժամանակ կառավարիչ էր նշանակուած Սասունում։ Աթաբէկի եւ ամիրսպասալարի զոյգ պաշտօնները կորցնելուց եւ

առհասարակ վրաց արքունիքի հետ կապերը խզելուց յետոյ Մահկանաբերդցիները ԺԳ-դարի վերջում զրկուեցին խոշոր տիրոյթներից։ Ինչպէս երեւում է, նրանք համեստ տարածքներ էին պահպանել անգամ Հայաստանում։

Դ. ԴԱՒԱՆԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ ԵՒ ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴԻՄԱՊԱՏԿԵՐԸ

Մինչեւ իրենց երկրորդ բարձրացումը Մահկանաբերդցիները անվերապահօրէն հետեւողական միաբնակներ էին։ Այսպէս, Ամիր–Քրդի հովանաւորութիւնն էին վայելում Մորոյ Զորոյ վանքը[34], որդիները եւ դուստրը կապուած էին Նոր Գետիկի[35], Մակարավանքի[36], Շխմուրատի[37] վանքերի հետ։ Սադուն Բ-ի եւ Խութլու Բուղայի օրօք, նրանց հովանաւորութեամբ վերելք էին ապրում միաբնակ հոգեւոր եւ ուսումնագիտական կենտրոններ՝ Առաքելոց, Կիրանց, Դեղձուտի վանքերը[38]։ Եւ այնուամենայնիւ, սկսած Ամիր–Քրդից, Մահկանաբերդցիները ամէնասերտ ու երկարատեւ փոխյարաբերութիւններ ունէին Հաղբատի հետ[39]։ Բաւական է ասել, որ այստեղ են թաղուել Ամիր–Քուրդը, նրա որդիները, Սադուն Բ-ն։ Հաղբատում է գտնւում Խութլու Բուղայի որմնանկարը[40]։

Իրենց հերթին, Խաւռասեանները ԺԳ-դարի առաջին կէսին հոգեւոր կենտրոն եւ տոհմական հանգստարանի վայր էին ընտրել Բագնայրի վանքը Շիրակում[41]։

Մահկանաբերդցիների՝ ԺԳ-դարի երկրորդ կէսում երկաբնակութեանը հարելու վերաբերեալ որեւէ տեղեկութիւն աղբիւրներում չի պահպանուել։ Սադուն Բ-ի կողմից Գարեջայի վանքերին հովանաւորութիւն ցոյց տալը[42], Խութլու Բուղայի՝ Երուսաղէմի Սուրբ Խաչ վանքի «ագապ»-ներում յիշատակուելը[43], Վանենիի հնարաւոր յուղարկաւորութիւնը Քոբայրի երկաբնակ վանքում[44], այնուամենայնիւ փաստեր են, որոնք մտածել են տալիս, թէ այդպիսի դաւանական անցումը լիովին բացառուած համարել չի կարելի։ Թէ՛ միաբնակ եւ թէ՛ երկաբնակ վանքերին նիւթապէս սատարելու փաստերը վկայում են, որ Մահկանաբերդցիների գործունէութիւնը Զաքարեանների լայնախոհ դաւանական քաղաքականութեան զուգահեռն է ներկայացրել։

Բազմազան են եղել Մահկանաբերդցիների միջէթնիկական առընչութիւնները։ Հայկական տոհմերից զատ նրանք խնամիական կապեր էին հաստատել ժամանակի նշանաւոր վրացական եւ տարաէթնիկ մահմեդական (պարսկականից բացի՝ հնարաւոր է նաեւ թուրքական) ընտանիքների հետ։ Առաջին բարձրացման ժամանակ նրանք բարեկամացել էին Զաքարեանների եւ արցախեան ազդեցիկ տոհմերից Հաթերքցիների, երկրորդ վերելքի փուլում՝ Օրբելեանների, կրկին անգամ Զաքարեանների,

վրացի Ջաղելիների եւ անգամ արքայական տան հետ։ Մահմեդական ընտանիքների հետ ամուսնական առընչութիւններ են հաստատել թէ՛ Խաւռասեանները եւ թէ՛ աւագ տոհմաճիւղը։ Մահկանաբերդցիների համար, ելնելով նրանց գործունէութեան ծաւալման տարածաշրջանի թելադրանքից, անշուշտ ընորոշ է եղել լեզուների (հայերէնից ու վրացերէնից բացի, նաեւ արեւելեան) լաւ իմացութիւնը, թէեւ ուղղակի վկայութիւններ ունենք միայն Սադուն Բ-ի վերաբերեալ։

Տոհմի մշակութային ակտիւութիւնը (եկեղեցաշինութիւն, ձեռագրերի պատուիրատուութիւն) զգալի է եղել միայն ԺԲ. դարի վերջին քառորդում — ԺԳ. դարի սկզբում։ Մահկանաբերդցիների համար, ելնելով նրանց գործունէութեան պարբերացումից, կենսագործունէութեան աշխարհագրական շրջանակներից, մշակութային միջավայրից եւ այլ հանգամանքներից, յատկանշական է եղել «աշխարհաքաղաքացիութեան ոգին»։ Տոհմի անդամները, առաւել հզօրութեան երկու փուլում էլ, աչքի են ընկել փոխադարձ չփումների մէջ մտնելու կարողութեամբ, որը անհետեւանք չէր մնալու՝ մշակութային նախնական նկարագրի վրայ ազդելու եւ Մահկանաբերդցիների հայկական էթնիկ դիմապատկերը զգալիօրէն բարդացնելու հայեցակէտերից։ Ցաւօք, այդ չափազանց ուշագրաւ գործընթացների մասին առայժմ կարելի է միայն կռահումներ անել։

Ե. ՏՈՀՄԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Մահկանաբերդի տէրեր (Սադունեաններ)

1. Վահրամ (ծնուել է, հաւանաբար ԺԱ. դարի վերջում—գործել է ԺԲ. դարի առաջին կէսում)։ «Իշխան» տիտղոսով նրան յիշատակում է Մխիթար Գոշը[45]։ Պէտք է ենթադրել, որ նա եւս իշխում էր Մահկանաբերդի գաւառում։ ԺԲ. դարի կէսերին նա այլեւս կենդանի չէր եւ ասպարէզում էին նրա որդիները։

2. Վասակ, որդի Վահրամի (ծնուել է ԺԲ. դարի առաջին քառորդում—մահացել է 1160 թուականից յետոյ)։ «Շահապ քաղաքին Տփխեաց» — քաղաքապետ էր դեռեւս Դեմետրէ Ա-ի օրօք։ 1154 թ., երբ Կարինի ամիրա Սալդուխը (մօտաւորապէս 1153—1164) գերի ընկաւ Անիի մօտ եւ բերուեց Տփխիս, Վասակը մեծապէս օգտակար եղաւ Սալդուխին։ Ցայտնի են Վասակի եւ նրա եղբայրների սերտ կապերը Դեմետրէ Ա-ի որդի Դաւիթ Ե-ի հետ։ Դաւիթ Ե-ի կարճատեւ գահակալութիւնից յետոյ, երբ վրաց թագաւորութեան գլուխ կանգնեցին վանքից պալատ վերադարձած Դեմետրէ Ա-ն ու կրտսեր որդի Գէորգի Գ-ն (1156—1184), Վասակն ու եղբայրները փախան Կարին։ Այստեղ նրանց «խնդութեամբ եւ մեծարանօք» ընդունեց Սալդուխ ամիրան[46]։ Վասակն, անշուշտ, շարունակում էր պայքարը Գէորգի Գ-ի դէմ՝ դաշնակցելով Հայաստանում հաստատուած

մահմեդական կազմաւորումների հետ։ Ամենայն հաւանականութեամբ, նա մասնակցում էր Շահ–Արմէնի աներ Ատրատինի եւ վրացական բանակի միջեւ 1160 թ. Հոկտեմբերին Օլթիի գաւառում տեղի ունեցած ճակատամարտին[47]։ Վախճանուել է Կարինում եւ թաղուել քաղաքի սուրբ Աստուածածին եկեղեցում[48]։

3. Քուրդ (Ամիր–Քուրդ), որդի Վահրամի (ծնուել է ԺԲ. դարի առաջին քառորդի վերջում կամ յաջորդ քառորդի սկզբում–մահացել է ԺԲ. դարի 90ական թուականներին)։ Համագործակցում էր եղբօր հետ եւ որոշակի դեր էր կատարում Տփխիսի կառավարման գործում դեռեւս ԺԲ. դարի կէսերին։ Աւագ եղբօր մահից յետոյ, երբ Վասակն ու եղբայրները գործում էին Կարինում, նրան անցաւ տոհմի աւագութիւնը[49]։ Որոշ ժամանակ անց Ամիր–Քուրդը հաշտուել է Գէորգի Գ-ի հետ եւ վերադարձել է վրացական թագաւորութիւն՝ կրկին ստանձնելով Տփխիսի քաղաքապետի պաշտօնը։ Ապացուցել է իր հաւատարմութիւնը կենտրոնական իշխանութեանը եւ կարեւոր դեր է կատարել մեծատոհմիկ աւատատէրերի գլխաւորած 1176–1177 թթ. խոշոր ապստամբութեան ճնշման գործում։ Նա էր, որ Մահկանարերդի գաւառում ջախջախեց Լիպարիտ Օրբելու գլխաւորած ապստամբական ջոկատը եւ հարկադրեց ապստամբների մեծ մասին պաշտպանութեան անցնել Լոռէ բերդում[50]։ Տփխիսի ամիրան էր յաջորդ տարիների ընթացքում, թէեւ անյայտ է մնում նրա պաշտօնավարութեան աւարտատարին։ Հաւաստի է սակայն, որ նա ամիրայի պաշտօնում չէր արդէն 1185 թուականի սկզբում։ Նրա պաշտօնանկութիւնը, հաւանաբար, տեղի է ունեցել 1184–1185 թթ., երբ փոփոխութիւնների ենթարկուեց ողջ արքունական պաշտօնէութիւնը[51]։ 70ական թուականների վերջում – 80ական թուականների սկզբին նա եռանդուն եկեղեցաշինական գործունէութիւն է ծաւալել Հիւսիսային Հայաստանում կամ էլ նիւթապէս սատարել է հին հոգեւոր կենտրոններին։ Մասնաւորապէս, նա 1181 թ. օժանդակել է Սանահինի Ամենափրկիչ եկեղեցու ժամատան կառուցմանը[52], Գէորգի Գ-ի շնորհած հրովարտակով հարկերից ազատել է Մորոյ Զորոյ վանքը[53], իր մասնակցութիւնն է բերել Հաղարծինի վանքի նորոգմանը[54]։ Վախճանուել է ԺԲ. դարի 90ական թուականներին եւ յուղարկաւորուել Հաղբատում[55]։

4. Սարգիս (Ամիր–Սարգիս), որդի Վահրամի (ծնուել է, հաւանաբար, ԺԲ. դարի երկրորդ քառորդում–մահացել է, թերեւս, միեւնոյն դարի վերջին քառորդում)։ Անկասկած եղբայրների օգնականն է եղել Տփխիսի կառավարման գործում։ Այստեղից էլ «ամիր» տիտղոսով յիշատակութիւնը աղբիւրներում[56]։ Հաւանաբար, Կարինից հայրենիք էր վերադարձել Ամիր–Քրդի հետ միաժամանակ։ Ամիր–Սարգսից են սերում Խաւռասեանները։

5. Սահակադուխտ, դուստր Վահրամի (ծնուել է ԺԲ. դարի առաջին տասնամեակներին մահացել է, հաւանաբար, ԺԳ. դարի սկզբին)։ Գանձակեցին բացորոշում է այն սերտ կապը, որ գոյութիւն ունէր ԺԲ. դարի երկրորդ կէսում Մահկանաբերդցիների եւ Զաքարեանների տոհմերի միջեւ։ Ըստ պատմիչի, Զաքարէն եւ Իւանէն որդիներն էին «քեռ բարեպաշտ իշխանին Քրդին»[57], ուստի Իւանէն սիրով ընդառաջեց Ամիր–Քրդի մտերիմ Մխիթար Գոշի՝ Գետիկի վանքի համար նոր տեղ յատկացնելու խնդրանքին[58]։ Զաքարեանների հետ ազգակցութիւնը ընդգծում էին նաեւ Ամիր–Սարգսի սերունդները, հպարտութեամբ նշելով, որ նա «էր եղբայր մաւր կեսառոսաց Հայոց եւ Վրաց եւ ամենայն Ափխազաց, բարեպաշտիցն եւ Աստուծով զաւրացելոցն մեծին Զաքարիայի եւ Իւանէի»[59]։ Ինչպէս երեւում է, Սահակադուխտն ամուսնուց զգալիօրէն ուշ է վախճանուել եւ ականատես է եղել որդիների գլխաւոր յաջողութիւններին։ Ցուղարկաւորման տեղը (Անի) եւ տապանաքարի բովանդակութիւնը («սուրբ եւ մեղսաքաւիչ պատարագն որ սմա կատարի Սահակդխտո է, ծնաւղի Զաքարէա. եւ Իւանէի թագաւորաց Հաոց»)[60], վկայում են, որ Սահակադուխտը կնքել է իր մահկանացուն Անիի ազատագրումից (1199 թուական) յետոյ եւ երբ արդէն աւարտուել էր Զաքարեանների թագաւորական ծագման տեսութեան մշակումը։ Առաւել հաւանական է, որ Սահակադուխտը վախճանուել է ԺԳ. դարի առաջին տարիներին, ամուսնուց շուրջ մէկուկէս տասնամեակ յետոյ։

6. Սադուն Ա.[61] որդի Ամիր–Քրդի (ծնուել է, հաւանաբար, ԺԲ. դարի երրորդ քառորդում–մահացել է 1205 թուականից յետոյ, թերեւս ԺԳ. դարի առաջին երեք տասնամեակների ընթացքում)։ Որոշակի իշխանութիւն ունէր դեռեւս հօր կենդանութեան օրօք։ Այսպէս, նա «մեծ իշխան» է անուանուել 1181 թուականին, Շիմուրատի վանքի արձանագրութիւնում[62]։ Յիշատակւում է որպէս «մեծ եւ հզաւր իշխան Կայենոյ» նաեւ Մակարավանքի 1205 թուականի վիմագրերից մէկում[63]։ Աւելի վաղ, ԺԲ. դարի 90ական թուականներին, եղբօր եւ քրոջ հետ միասին գործուն մասնակցութիւն է ունեցել Նոր Գետիկի կառուցմանը[64]։ Այսպիսով, հօր մահուանից յետոյ Սադուն Ա.ն շարունակում էր պահպանել տոհմական կալուածքները հայրենական գաւառում։ Սադուն Ա.ն հանդէս է եկել նաեւ որպէս մեկենաս։ Նրա ծախսով ձեռագիր է ընդօրինակուել Նոր Գետիկի վանքում[65]։

7. Դաւիթ, որդի Ամիր–Քրդի (ծնուել է, հաւանաբար, ԺԲ. դարի երրորդ քառորդում–մահացել է, թերեւս, ԺԳ. դարի առաջին տասնամեակների ընթացքում)։ ԺԲ. դարի 90ական թուականներին օժանդակում էր Մխիթար Գոշին՝ Նոր Գետիկի վանքի շինարարական աշխատանքների ընթացքում[66]։ Յայտնի է որպէս այժմ Նոր Ջուղայում պահուող նշանաւոր

Աւետարանի ստացող[67]։ Ցուղարկաւորուել է Հաղբատում, տոհմական հանգստարանում[68]։

8. Արզու Խաթուն, դուստր Ամիր–Քրդի (ծնուել է, մօտաւորապէս, ԺԲ. դարի երրորդ քառորդում–մահացել է 1214 թուականից յետոյ)։ Հաթերքի իշխան Վախտանգ Բ.ի կինն էր։ Աչքի է ընկել մշակութային արդիւնաւէտ գործունէութեամբ։ Գանձակեցին հիացմունքով է խօսում նրա եւ զստրերի գործած «զարմանալի տեսողաց» եկեղեցական վարագոյրների ու խորանի ծածկոցների մասին[69]։ Ցայտնի է դարձել նաեւ եկեղեցաշինական գործունէութեամբ։ «Ջեռնտու» է եղել Նոր Գետիկի կառուցմանը[70]։ Ամուսնու եւ երկու որդիների մահից յետոյ, 1214 թուականին նրան է վիճակուել աւարտել Դաղիվանքի գմբէթաւոր եկեղեցու շինարարութիւնը[71]։

9. Շերբարոք, որդի Սադուն Ա.ի (ծնուել է, հաւանաբար, ԺԲ. դարի վերջին քառորդում–մահացել է ԺԳ. դարի առաջին կէսում)։ Գլխաւորում էր Մահկանաբերդցիների տոհմը՝ ընտանիքի ժամանակաւոր անկման փուլում։ Սադուն Բ.ի նախնիներին թուարկելու առիթով, նրան երկիցս յիշում է Գանձակեցին[72]։

10. Սադուն Բ. որդի Շերբարոքի (ծնուել է, հաւանաբար, ԺԳ. դարի առաջին քառորդում–մահացել է 1282 թուականին)։ Սադուն Բ.ի շեշտակի բարձրացման սկզբնական փուլում որոշակի դեր են կատարել նրա ֆիզիկական կարողութիւնները։ Նա յայտնի էր որպէս «այր անձնեայ եւ քաջամարտիկ»[73], «բարետես, ուժով յոյժ զօրեղ», «նշանաւոր, ընտիր ըմբիշ, վարպետ նետաձիգ»[74]։ Հենց այդ յատկանիշերի շնորհիւ Սադուն Բ.ն գրաւեց Հուլաւու իլխանի (1256–1265) ուշադրութիւնը, քանի որ մոնղոլներն առանձնայատուկ հիացմունքով էին վերաբերում նշանաւոր ըմբիշներին[75]։ Այնուամենայնիւ, մինչեւ ԺԳ. դարի 50ական թուականների վերջը Սադունը գործում էր սահմանափակ շրջանակներում, քանի որ նա ընդամէնը Աւագ Զաքարեանի դուստր Խոշաքի խնամակալն էր եւ սենեկապետը[76]։ Այսպէս, 1258 թուականին նա, հաւանաբար, դեռեւս Խոշաքին ենթակայ պաշտօնեայ էր[77], համեստ ազդեցութեամբ։ Սադուն Բ.ի սրընթաց վերելքը սկսուեց յաջորդ տարում, երբ Հուլաւու իլխանը արշաւանք ձեռնարկեց դէպի Ասորիք, իսկ վրաց թագաւոր Ուլու Դաւիթը (թագաւորել է 1246 թ.) հրաժարուեց մասնակցելու այդ ձեռնարկմանը ու ապստամբութիւն բարձրացրեց։ ԺԲ.–ԺԳ. դդ. պարսիկ պատմիչ Ռաշիդ ադ–Դինը առանձնացնում է Սադուն Բ.ի վաստակը Հալէպի ամրոցի առման գործում,[78] որը տեղի է ունեցել 1259 թուականի վերջում – 1260 թուականի սկզբում։ Հաւանաբար, նոյն 1260 թուականին էլ Հուլաւու իլխանի սիրելին դարձած Սադունը միջնորդի դեր ստանձնեց մոնղոլների եւ սասունցիների միջեւ, որոնք պատրաստակամութիւն էին յայտնել,

հաւանաբար որոշակի պայմաններով, կամաւոր ենթարկուել նուաճողներին։ Ինչպէս երեւում է, Սադունը կարողացել էր գլուխ բերել այդ գործը, եւ նրան էր յանձնուել Սասունի կառավարումը[79]։

Սադունը կրկին ցուցադրեց իր դիւանագիտական տաղանդը 1261 թուականին, որպէս թարգման, բայց իրականում իբրեւ բանակցութիւնների անուղղակի մասնակից հանդէս գալով Հուլաւուի նստավայրում։ Երբ 1259–61 թուականների հայ–վրացական երկրորդ ապստամբութիւնը անյաջողութեամբ աւարտուեց, մոնղոլները հարցաքննութիւն կազմակերպեցին՝ հաշիւ պահանջելով Ուլու Դաւթից եւ նրա մերձաւոր զինակից Սարգիս Ջաղելուց։ Իլխանական նստավայրում տեղի ունեցող այդ հաւաքի ժամանակ «Սադունը բարօք թարգմանում էր, ձեւակերպում թագաւորի ասածները, որովհետեւ թագաւորը փոքր ինչ կարկամում էր։ Սադուն Մահկանաբերդցին լաւ էր ճարտասանում»[80]։ Վերջիվերջոյ, բանակցութիւնները ընդհատուեցին Ոսկէ Ցորդայի խան Բերքայի անակնկալ յարձակման լուրն ստացուելուց յետոյ։ Ուլու Դաւիթը եւ Սարգիս Ջաղելին Բերքայի դէմ կռիւների ընթացքում աչքի ընկան քաջութեամբ, եւ սկիզբ դրուեց նրանց ու մոնղոլների միջեւ յարաբերութիւնների կարգաւորմանը։

Վրաստանում եւ Հայաստանում Սադունի դիրքերն աւելի ամրապնդուեցին Արաղա իլխանի (1265–1282) գահ բարձրանալուց յետոյ։ Ըստ Ռաշիդ ադ–Դինի, իշխանը «յանձնեց Վրաստանը Դաւթին եւ նրա որդի Սադունին»[81]։ Այսպիսով, վրաց արքայ Ուլու Դաւթի հետ միասին, որին մոնղոլները չէին վստահում, Սադունին էր յանձնուել Վրաստանի կառավարումը։ Պատմիչն, անտեղեակ լինելով իրական կացութեանը, Սադունին նոյնիսկ համարել է Ուլու Դաւթի որդի եւ լիովին բնականն է համարել իշխանութեան աննախադէպ կենտրոնացումը հզօր մեծատոհմիկի ձեռքում։ Հասկանալի է, որ նման սխալը բացատրւում է վրաց արքունիքում Սադունի ձեռք բերած բացառիկ դիրքով եւ ազդեցութեամբ[82]։ Սադունի յետագայ բարձրացումը Աղաբա իլխանի օրոք նշում է նաեւ Վրաց ժամանակագրութիւնը[83]։ Սադունը, դառնալով «սիրած մեծ Ապաղանի»[84], անշուշտ, առաջինն էր համարւում հայ իշխանների շարքում, ինչպէս այդ հաւաստւում է սկզբնաղբիւրներից[85]։

Սադուն Բ-ի գործունէութեան այս փուլում ուշադրութիւն է գրաւում նրա սերտ կապը իլխանութեան բարձրաստիճան բիւրոկրատիայի հետ։ Այդ ջերմ փոխյարաբերութիւնները Մահկանաբերդի տիրակալի վերելքի կարեւորագոյն լծակն էին ներկայացնում։ Վրաց ժամանակագրութիւնը նրա զօրեղացումը ուղղակիօրէն առընչում է Մեծ Սահիբ Դիւանի՝ Շամս ադ–Դին Մուհամէտ Ջուվէյնիի հովանաւորութեան հետ։ Առաւել եւս, երբ Սադունը Սահիբ Դիւանի կնոջ՝ Խոշաք Ջաքարեանի

սենեկապետն էր, հեջիբը[86]։ Ինքը՝ Սաղունը, չէր յապաղել խնամիական կապ հաստատել իրանական բիւրոկրատական վերնախաւի հետ։ Գիւրջիստանի վիլայէթի վալիներից Խոջա–Ագիզի դուստրը դարձել էր Սաղունի կինը[87]։ Հենց այն Խոջա–Ագիզի, որին վրաց թագաւոր Ուլու Դաւիթը համարում էր իրեն հասած բոլոր արհաւիրքների սկզբնապատճառ եւ ժամանակին՝ հայ–վրացական երկրորդ ապստամբութեան միջոցին, պահանջում էր իրեն յանձնել այդ պաշտօնեային[88]։

Նախկին հեջիբի, արդ՝ արքունիքի ամենահզօր պաշտօնեայի գլխաւոր հոգսը դարձաւ տիրոյթների ընդարձակումը, ընդ որում նա ձգտում էր տիրանալ դրամական խոշոր եկամուտ բերող քաղաքների, քանի որ «հայրենիքն արժան էր եւ ոսկին թանգ»[89]։ Նրան «բազում երկրներ պարգեւեց» դեռեւս Ուլու Դաւիթը[90], բայց նոր կալուածքների ձեռքբերման համար առանձնայատուկ նպաստաւոր պայմաններ ստեղծուեցին ԺԳ. դարի 70ական թուականների սկզբին, երբ վրաց Դեմետրէ Բ. թագաւորը (1271–1289) անչափահաս էր եւ իր խնամակալ (աթաբէկ) նշանակուած Սաղունի փաստական վերահսկողութեանը ենթարկուած լինելով՝ զուրկ ինքնուրոյն քաղաքականութիւն վարելու հնարաւորութիւնից։ 1272 թուականին Սաղունը վրաց արքայից ստացաւ երկու քաղաք թագաւորութեան արեւելքում՝ Թելաւը եւ Բելաքանը, իսկ յաջորդ տարում տիրացաւ Դմանիսին եւ Կարսին[91]։ Այսպիսով, 1272 թուականին ողջ վրաց թագաւորութեան աթաբէկ եւ միաժամանակ ամիրսպասալար ճանաչուած Սաղունի[92] տիրոյթները այդուհետեւ հսկայական տարածք էին ընդգրկում, ընդ որում կարեւոր ինչպէս ռազմա–քաղաքական, այնպէս էլ տնտեսական առումով։ Հայաստանում Սաղունը ԺԳ. դարի 60–80ական թուականների սկզբին հանդէս է գալիս ոչ միայն տոհմական տիրոյթների վիմական յուշարձաններում[93], այլեւ Աւագեան տան տարածքում[94], Շահնշահեաններին պատկանող Արագածոտնում[95], եւ անգամ Զաքարեանների հին «ոստան» Խոռակերտում[96]։ 70ական թուականներին նրա «աթաբէկ» եւ «աթաբէկ եւ ամիրսպասալար» տիտղոսներով հանդէս գալը դառնում է սովորական երեւոյթ[97]։ Մինչեւ իր մահը 1282 թուականին[98], Սաղուն Բ.ն, անշուշտ, առաւել հզօր եւ ազդեցիկ անձնաւորութիւնն էր Հայաստանում եւ Արեւելեան Վրաստանում։

Սաղուն Բ.ն իրաւամբ կարող է համարուել հայոց վանքերի աչքի ընկնող հովանաւոր։ Նա Հաղբատի «տէրն» էր[99], կապեր ունէր Մահկանաբերդի գաւառի հոգեւոր կենտրոններից Առաքելոց վանքի հետ[100], նուիրատուութիւն է կատարել Աղջոց վանքին[101]։ Սաղուն Բ.ի դաւանական կողմնորոշման մասին պատկերացում տուող փաստերից է նաեւ նրա մասնակցութիւնը հայոց եկեղեցու Զագաւանից ժողովին[102]։ Միաժամանակ, նա յարաբերութիւններ էր պահպանում նաեւ երկաբնակ հոգե-

ւոր կենտրոնների հետ։ Այսպէս, «կենդանութեան օրօք ինքը վճարեց Գարեջայի տասներկու անապատների մալն ու դալանը»[103]։

Մահկանաբերդի տիրոջ դիմապատկերը լրացնում են նրա ընտանեկան կեանքի մասին տուեալները։ Ստոյգ յայտնի է, որ նա ամուսնացել էր առնուազն երեք անգամ։ Խոջա–Ազիզի ընտանիքի հետ խնամիանալուց յետոյ, Սադունը նմանապէս կապուել էր Ախալցիխէցիների տոհմի հետ[104]։ Ի վերջոյ, ԺԳ. դարի 70ական թուականներին նա հարկադրեց Դեմետրէ Բ.-ին՝ կնութեան տալ իրեն թագաւորի քրոջը՝ Թամարին[105]։ Ի դէպ, բացառուած չէ, որ մինչեւ Հուլաւուի բարեհաճութեանը արժանանալը նա փեսայացած լինէր որեւէ հայկական կամ վրացական տոհմի։ Սադունի ընտանեկան վարքագիծը այն հանգամանքներից է, որ նպաստել է Սադունի ընդգծուած բացասական գնահատականին[106]։

Սադուն Բ.-ն յուղարկաւորուած է Հաղբատում[107]։

11. Խութլու Բուղա, որդի Սադուն Բ.-ի (ծնուել է ԺԳ. դարի կէսերին – 60ական թուականներին–մահապատիժի է ենթարկուել 1293 թուականին)։ Անշուշտ, առաջին հերթին նրան պէտք է նկատի ունենալ 1268 թուականի Աշտարակի արձանագրութիւնում յիշատակուած Սադունի որդիների շարքում[108]։ Հօր մահից յետոյ Խութլու Բուղան բաւականաչափ ազդեցիկ էր՝ Սադուն Բ.-ի պաշտօններին յաւակնելու համար։ Թագաւորական իշխանութեան համար՝ մոնղոլների հետ սերտօրէն համագործակցող Խութլու Բուղան ոչ պակաս վտանգ էր ներկայացնում, քան Սադուն Բ.-ն, եթէ նաեւ նկատի ունենանք, որ նրա քեռին, Խոջա Ազիզի որդի Իլ–Խութլուն, Դեմետրէ Բ.-ի ոխերիմ թշնամին էր։ Հասկանալի է, որ ազգականները համատեղ էին գործում վրաց արքայի դէմ[109]։ Բախումները Դեմետրէ Բ.-ի (յետագայում՝ նրա յաջորդների) եւ Խութլու Բուղայի միջեւ անընդմէջ մաքառման բնոյթ էին կրում եւ ողբերգական վախճանի հանգեցրեցին երկու կողմերին էլ։

Սադուն Բ.-ի մահից յետոյ Դեմետրէ Բ.-ն հայրական պաշտօններից Խութլու Բուղային չնորհեց միայն սպասալարութիւնը։ Նա, թերեւս ոչ առանց հիմքի, երկիւղ էր կրում, որ երկու պաշտօնները համատեղելու դէպքում Խութլու Բուղան չափազանց մեծ վտանգ կը ներկայացնի[110]։ Դժգոհ Խութլու Բուղան ապաստան գտաւ Ահմէտ իլխանի (1282–1284) արքունիքում եւ ծառայելով Ահմէտին՝ այլեւս չէր ենթարկւում վրաց արքային[111]։ Աւելին, նա գործուն մասնակցութիւն բերեց այն իրադարձութիւններին, որոնց հետեւանքով էականապէս փոխուեց կացութիւնը ամբողջ իշխանութիւնում։ 1284 թուականի Յունուարին Ահմէտ իլխանի հրամանով մահապատժի ենթարկուեց նրա եղբայր Ղոնղուրթայը (Ղոնղրաթայ)[112]։ Այնուհետեւ նոյն ճակատագրին արժանացան Աբուլեթիսձէ երկու եղբայրները, Յագանի որդիները։ Ընդ որում, ինչպէս պըն-

դում է Վրաց ժամանակագրութիւնը, այդ տեղի ունեցաւ Խուլթլու Բուղայի խարդաւանքների հետեւանքով[113]։ Երկու տոհմերի մրցակցութիւնը, որը պայմանաւորուած էր ինչպէս ամիրսպասալարութեան ու աթաբեկութեան պաշտօնների համար ծաւալուած պայքարում, այնպէս էլ Դմանիս քաղաքի պատկանելութեան հարցի շուրջ վէճով[114], առժամանակ աւարտուեց Մահկանաբերդցիների յաղթանակով։

1284 թ. գարնանը, երբ մահու կենաց գօտեմարտ ծաւալուեց Ահմէտ իլխանի եւ գահի օրինական ժառանգորդ Արղունի միջեւ, Դեմետրէ Բ.ն հանդէս եկաւ Ահմէտի կողմում եւ Իւանէ Բ. Զաքարեանի ու Խուլթլու Բուղայի ուղեկցութեամբ մասնակցեց դէպի Խորասան ձեռնարկուած արշաւանքին[115]։ Սկզբում յաջողութիւնը ուղեկցում էր Ահմէտին, որը գերի վերցրեց Արղունին եւ ի նշան շնորհակալութեան՝ ցուցաբերած օժանդակութեան համար, վրաց արքային ենթարկեց բոլոր վրացական իշխաններին[116]։ Նրանցից Խուլթլու Բուղան բանտարկուեց եւ ազատ արձակուեց միայն հաւատարմութեան երդում տալուց յետոյ։ Նրան վերադարձուեցին Սադունի կալուածները, որոնք, ինչպէս երեւում է, մինչ այդ բռնագրաւել էր վրաց թագաւորը[117]։ Հնարաւոր է, որ հենց այդ դէպքն է նշել Սամուէլ Անեցու երկի շարունակողներից մէկը՝ «Դեմետր թագաւորն զՍալատունին երկիրն խլեաց» արտայայտութեամբ[118]։

Իրադարձութիւնները, սակայն, լիովին անսպասելի շրջադարձ ունեցան։ Նոյիններին՝ մոնղոլ ազնուականների, մի մասը անցաւ Արղունի կողմը, բանտարկութիւնից ազատեց նրան եւ Ահմէտին մահապատժի ենթարկելուց յետոյ իլխան հռչակեց գահի օրինական ժառանգորդին։ Նման պայմաններում վրաց արքան ճշգրիտ քաղաքական հաշուարկ կատարեց։ Նա ժամանակին անցաւ Արղունի (1284–1291) կողմը եւ համապատասխանաբար շնորհների արժանացաւ։ «Սիրեաց Արղունն, եւ ետ նմա զամենայն աշխարհս Հայոց՝ զտունն Աւագեան եւ զտունն Շահնշահեան եւ զԳագեցին եւ զորդիսն Սադուն աթաբէկին»[119]։ Յաջորդ հինգ տարիների ընթացքում ակնյայտ առաւելութիւնը վրաց արքայի կողմն էր, եւ Խուլթլու Բուղան, ինչպէս երեւում է, լիովին հաշուի էր առել ուժերի յարաբերութեան մէջ կատարուած փոփոխութիւնը։ Նրա դրութիւնը պէտք է առանձնապէս ծանրացած լինէր 1284 թուականի Հոկտեմբերից, յետոյ, երբ մահապատժի ենթարկուեց Սադուն Բ.ի հին բարեկամը՝ Սահիբ Դիւան Ջուվէյնին[120]։ Խուլթլու Բուղան հարկադրուած էր հաշտուել իրական կացութեան հետ եւ Աւագեան տանը, Դաւիթ արքայազնի մօտ, կատարել այն պատուաւոր ծառայութիւնը, որը ժամանակին Սադուն Բ.ի առանձնաշնորհն էր։ Նա դարձել էր ապագայ Դաւիթ Ը.ի խնամակալը՝ աթաբէ-

կը, բայց այդ պաշտօնն այդ տարիներին այլեւս չունէր նախկին փայլը, քանի որ միաժամանակ շնորհւում էր նաեւ այլ իշխանների։ Այսպէս, 1285 եւ 1287 թուականներին, երբ աւանցիներին որոշ հարկերից ազատել են նախ՝ Դաւիթ արքայազնը, ապա «աթաբէկ եւ ամիրսպասալար Խուիլու-բուղայ»ն[121], «զաթաբէկութիւն աշխարհիս Հայոց» վարում էր Տարսայիճ Օրբելեանը[122]։ Ստացւում է, որ Դեմետրէ Բ-ն թուլացրել էր իր ահեղ հակառակորդ Խուիլու Բուղային՝ մասնատելով մինչ այդ միասնական աթաբէկութեան գործակալութիւնը[123]։ Սակայն Խուիլու Բուղան հեշտութեամբ տեղի տուողներից չէր։ Այս առումով ուշագրաւ փաստ է, որ միեւնոյն 1287 թուականին գրուած մէկ այլ արձանագրութիւնում, ընդ որում Աւագեան տան ստորակայ Խաղբակեաններին պատկանող Աղջոց վանքից, Դաւիթը որպէս թագաւոր է հանդէս գալիս[124]։ Պէտք է կարծել, որ Խուիլու Բուղայի սանի թագաւոր ճանաչուելը, թէկուզ սահմանափակ տարածքում, ամրապնդում էր Խուիլու Բուղայի դիրքերը։ Այնուամենայնիւ, փաստ է, որ երկու անդադրում ախոյեանները՝ Դեմետրէ Բ-ն եւ Խուիլու Բուղան ինչ–որ համաձայնութեան էին եկել։

Այդ բխրուն համաձայնութիւնն էլ արագօրէն խախտուեց 1288 թուականին։ Դեմետրէ Բ-ն գործի դրեց իր բարեկամական կապը Արղունի ամենազօր պաշտօնեայի՝ Բուղայի հետ, վերջինիս օգնութեամբ երկրորդ անգամ բանտարկեց Խուիլու Բուղային եւ հարկադրեց նրան յարքունիս յանձնել Դմանիսը[125]։ Գօտեմարտի եզրափակիչ փուլը, որը շեքսպիրեան տրամա է յիշեցնում, այնուամենայնիւ դեռ առջեւում էր։

1288 թուականի վերջում–1289 թուականի սկզբում, օգտուելով այն հանգամանքից, որ Բուղան արագօրէն կորցնում էր ազդեցութիւնը իլխանական արքունիքում, Խուիլու Բուղան եռանդուն գործունէութիւն ծաւալեց։ Նա եղբօր հետ միասին ուղեւորուեց Սամցխէ եւ ամուսնանալով այդ երկրամասի տիրակալ Բեքա Ջաղելու դստեր հետ, հզօր աջակից ձեռք բերեց։ Բուղայի շնորհազրկումից անմիջապէս յետոյ Բեքան պատուիրակներ ուղարկեց իլխանի մօտ եւ Սամցխէի տիրոջ ջանքերով Խուիլու Բուղային վերադարձուեցին Սաղուն Բ-ի տիրոյթները, այդ թւում Դմանիսն ու Թելաւը։ Դեմետրէ Բ-ից խլուեց նաեւ Աւագեան տունը, որը եւս յանձնուեց Խուիլու Բուղային[126]։ 1289 թուականի Յունուարի 16ին մահապատժի ենթարկուեց Բուղան, քիչ անց, Մարտի 12ին՝ Դեմետրէ Բ-ն[127], եւ Խուիլու Բուղան գործունէութեան լիակատար ազատութիւն ձեռք բերեց։ Նա, իր խոստման համաձայն, ձեռնամուխ եղաւ Արեւելեան Վրաստանի նոր թագաւորի ընտրութեան եւ գահ բարձրացման գործին։ Խուիլու Բուղան բանակցութիւններ վարեց Արեւմտեան Վրաստանի

թագաւոր Դաւիթ Նարինի հետ եւ անձամբ ուղեկցեց նրա որդի Վախտանգին Արեւելեան Վրաստան, իսկ յետոյ նաեւ Արղուն իլխանի նստավայր։ Դեմետրէ Բ-ի որդի Դաւթի փոխարէն, Խութլու Բուղայի օգնութեամբ, գահին տիրացած Վախտանգը (որն իշխելէ 1290ականներին) իր բարերարին չնորհեց աթաբէկի ու ամիրսպասալարի զոյգ պաշտօնները[128]։ Դառնալով Արեւելեան Վրաստանի փաստական կառավարիչ՝ Խութլու Բուղան չհանգստացաւ։ Այնուհետեւ նա ցանկացաւ գահ բարձրացնել գահի օրինական յաւակնորդին՝ Դեմետրէ Բ-ի որդի Դաւթին, ապագայ Դաւիթ Ը-ին, որը հօր մահապատժից յետոյ գտնուում էր իլխանի արքունիքում։ Խութլու Բուղայի այս նոր ձեռնարկման ժամանակը բաւականաչափ ճշգրիտ որոշւում է Վրաց ժամանակագրութեան տուեալներով։ Պատմիչն այն դնում է «Արղունի հիւանդութեան ժամանակ», որը «շարունակուեց չորս ամիս»[129]։ Արղուն իշխանը մահացել է 1291 թուականի Մարտի 10ին[130], ուստի պէտք է ենթադրել, որ Խութլու Բուղան իր ծրագիրն իրականացնելու համար որոշակի քայլեր է ձեռնարկել արդէն 1290 թուականի վերջում–1291 թուականի սկզբում։ Դաւթի եւ Վախտանգի միջեւ գահակալութեան հարցի շուրջ հակամարտութիւնները ռազմական բախումների չվերածուեցին, քանի որ 1291 թուականի վերջում–1292 թուականի սկզբում անսպասելիօրէն մահացաւ Վախտանգ թագաւորը։ Քէյղաթու իլխանը (1291–1295) Արեւելեան Վրաստանի թագաւոր ճանաչեց Դաւիթ Ը-ին, նրան ենթարկելով վրաց բոլոր իլխաններին[131]։

1291 թուականին տեղի ունեցաւ մոնղոլական իլխանութիւնների եւ Խութլու Բուղայի փոխյարաբերութիւնները բնութագրող մի կարեւոր իրադարձութիւն։ Քէյղաթու իլխանի գահ բարձրանալուց (1291 թուականի Յուլիսի 23) յետոյ, երբ իլխանական զօրքը մեկնեց Փոքր Ասիա՝ Տոնղուզլու քաղաքում ծագած ապստամբութիւնը ճնշելու[132], Խութլու Բուղան պատասխանատու յանձնարարութիւն ստացաւ։ Նա բանակ դրեց Մուղանում՝ պաշտպանելու համար իլխանութեան սահմանները Ոսկէ Յորդայի խաների անսպասելի յարձակումներից[133]։ Ուստի միայն վրացական աղբիւրներին անտեղեակ լինելու հանգամանքով է հնարաւոր բացատրել այն անհամոզիչ կռահումը, որը ժամանակին արել է պատմաբան Աշոտ Յովհաննիսեանը։ Նրա կարծիքով, «Ակներեւ է, որ արդէն 1291 թուականից Վրաստանում եւ Հայաստանում առկայ էր ապստամբական շարժում։ 1293 թ. Քէյղաթու խանի կողմից կառափնուած Խութլու Բուղա Արծրունին այդ ապստամբութեան ղեկավարն էր հենց»[134]։ Խութլու Բուղայի մահապատժի իրական պատճառը ոչ թէ հակամոնղոլական պայքարի ղեկավարումն էր, այլ նրա եւ Դաւիթ Ը-ի հակամարտութիւն-

ները։ Թէեւ թէ՛ Սաղուն Բ-ի եւ թէ՛ Խութլու Բուղայի փոխյարաբերութիւնները մոնղոլների հետ սերտ էին եղել, իսկ 1291 թ. Մահկանաբերդի տէրը շարունակում էր հաւատարմօրէն ծառայել մոնղոլներին, նուաճողները նաեւ անսպասելի չրջադարձ էին կատարում, թոյլ չտալու համար կողմերից որեւէ մէկի չափազանց հզօրացումը։ Հենց այդ էլ վերջիվերջոյ տեղի ունեցաւ, այս անգամ ի վնաս Խութլու Բուղայի։

1293 թուականին Դաւիթ Ը-ի եւ Խութլու Բուղայի միջեւ հակամարտութիւնը հասաւ իր բարձրակէտին։ Արեւելեան Վրաստանի թագաւորը դիմեց Քէյղաթու իլխանին եւ, չնայած մոնղոլական աւագանու մի մասի ցուցաբերած օժանդակութեանը յօգուտ Խութլու Բուղայի, չահեց անհնազանդ ստորակայի դէմ յարուցած դատավէճը։ Խութլու Բուղան փախաւ Յորդայից, բայց մոնղոլները նրան ճանապարհին ձերբակալելով ետ բերեցին եւ ստիպեցին Դաւիթ թագաւորին՝ անձամբ մահապատժի ենթարկել իր երբեմնի խնամակալին։ Դաւիթ Ը-ն լուծեց հօր վրէժը, իսկ իլխանը նրան չնորհեց Դմանիսն ու Խութլու Բուղայի ողջ ունեցուածքը[135]։ Որքան էլ տարօրինակ է, Խութլու Բուղայի մահուան ճիշդ տարեթիւը հաղորդում է Ռաշիդ ադ-Դինը։ Ըստ նրա, Խութլու Բուղայի մահապատիժը ի կատար է ածուել «հիջրայի 620 թուականի Շաբան ամսուայ վերջում», այսինքն՝ 1293 թուականի Օգոստոսի սկզբներին[136]։

Խութլու Բուղայի համար եւս տիպական էր աւանդական կապերի պահպանումը միաբնակ հոգեւոր կենտրոնների հետ։ Նա յիշատակւում է բազմաթիւ հայերէն արձանագրութիւններում[137], իսկ ԺԳ.–ԺԴ. դդ. տաղերգու Խաչատուր Կեչառեցին ողբում է նրա մահը իր «Ողբ վասն աւերման տանս Արեւելեան» ստեղծագործութիւնում[138]։ Ինչպէս երեւում է, Խութլու Բուղան, իր բոլոր նախնիների նման, առանձնակի կապուածութիւն է ունեցել Հաղբատի հետ, որտեղ եւ գտնւում է նրա որմնանկարային պատկերը[139]։ Կարելի է չկասկածել, որ Խութլու Բուղան փոխյարաբերութիւններ է ունեցել նաեւ քաղկեդոնական հաստատութիւնների հետ։ Մասնաւորապէս, յայտնի է, որ նրա յիշատակին «ագապ» է սահմանուած Երուսաղէմի Սուրբ Խաչ վանքում[140]։

Խութլու Բուղան կնքեց իր մահկանացուն առանց ժառանգ թողնելու։

12. Մանկասար, որդի Սաղուն Բ-ի (ծնուել է, հաւանաբար, ԺԳ. դարի կէսերին—60ական թուականներին—մահացել է 1293 թուականից յետոյ)։ Լինելով հզօր գերդաստանի ներկայացուցիչ, Մանկասարն ազդեցիկ դիրք ունէր։ Բաւական է ասել, որ նա ամուսնացած էր Դաւիթ Ը-ի

քրոջ հետ[141]։ Քանի որ 1295 թուականին վրաց թագաւորը քրոջն ամուսնացրեց մոնղոլ նոյիններից Թուքալի հետ[142], այն տպաւորութիւնն է ստեղծւում, որ Մանկասարը մինչ այդ արդէն մահացել էր։

13–14. ?, ?, որդիներ Սադուն Բ-ի (ծնուել են, հաւանաբար, ԺԳ. դարի երրորդ քառորդում–մահացել են ԺԳ. դարի վերջում կամ ԺԴ. դարի սկզբում)։ Նրանց մասին տեղեկանում ենք այժմեան Քարթլիս ցխովրեբայի մէջ չպահպանուած մի սկզբնաղբիւրից, որից ժամանակին օգտուել է ԺԷ. դարի հայազգի հեղինակ Փարսադան Գորգիջանիձէն։ Եղբայրները գործում էին նաեւ Խութլու Բուղայի մահապատժից յետոյ[143]։

15. Վանենի, դուստր Սադունի (ծնուել է, հաւանաբար, ԺԳ. դարի 50–60ական թուականներին–մահացել է 1285 թուականից յետոյ)։ Փոքրաթիւ հայերէն ու վրացերէն արձանագրութիւնները բաւականաչափ պատկերացում են տալիս իշխանուհու մշակութային–դաւանական դիմապատկերի մասին։ 1279 թուականին ամուսնու՝ Մխարգրձէլ Զաքարեանի հետ միասին կառուցել են Քորայրի քաղկեդոնականացուած վանքի գանգակատուն–տապանատունը[144]։ Մօտաւորապէս նոյն ժամանակ ամուսինները հարկերից ազատել են միաբնակ Սանահինի վանքը[145], նուիրատուութիւններ են կատարել Հաղբատին[146]։ Սանահինի արձանագրութիւնը, որտեղ ամուսինները նշում են իրենց «մահու չափ» տրտմելու մասին, քանի որ վանքը «հարկէ աւէրած էր եւ էկեղեցիքս փակած... յաւագ զատկին զվ[ար]դ[ապետն]երն ի քաշ ին արարել եւ այլ շատ նախատինք»՝ խօսուն վկայութիւն է նաեւ Վանենի ազգային զգացումների մասին։

Հաւանաբար, ամուսնու հետ միասին թաղուել է Քորայրում[147]։

16. ?, դուստր ?-ի (ծնուել է ԺԳ. դարի երկրորդ կէսում–մահացել է մինչեւ 1317 թուականը)։ Ըստ Օրբելեանի, նրա ազգական Լիպարիտ Բ-ի որդի Սմբատը «փեսայացեալ էր տանն աթաբէկի Սադունեանց»[148]։ Պատմիչը չի յիշատակում իշխանուհու որոշակի ազգակցական կապը Սադուն Բ-ի հետ, բայց նրա ամուսնու կեանքի տարեգրութիւնը յուշում է, որ Սադունեան իշխանուհին Խութլու Բուղայի եղբայրներից որեւէ մէկի դուստրը կարող էր լինել։ Մահուան ժամանակը յայտնի է ամուսնու թողած արձանագրութիւնից[149]։

17. Խութլու Բուղա Բ. (ծնուել է, հաւանաբար, ԺԳ. դարի վերջում–ԺԴ. դարի սկզբում–մահացել է 1367 թուականից յետոյ)։ Այս անձնաւորութեանը՝ «Զմանկասարենց Խութլու Բուղայն, զորդի եւ զթոռն իւր զամենայն, որ են խնամիք եւ բարեկամ», 1367 թուականին յիշատակում է Բջնիի արքեպիսկոպոս Մանուէլ Ագիզբեկեանը[150]։ Զափազանց հազուադէպ անունների (Մանկասար, Խութլու Բուղա) զուգակցութիւնը եւ խնամիական կապը Ագիզբեկեանների հետ՝ հիմք են տալիս ենթադրելու, որ

Մահկանաբերդցիները որոշակի դիրք էին պահպանում Հայաստանում նաեւ ԺԴ. դարի կէսերին։ Խութլու Բուղա Բ.ն Մանկասարի որդին է կամ, որ աւելի հաւանական է թւում՝ թոռը։

ԽԱՒՌԱՍԵԱՆՆԵՐ

1. Խաւռաս Ա., որդի Ամիր–Սարգսի (ծնուել է, հաւանաբար, ԺԲ. դարի երրորդ քառորդում–մահացել է 1232 թուականից յետոյ)։ «Իշխանաց իշխան» Խաւռասը իր զբաղեցրած դիրքի համար պարտական էր Զաքարէ Բ.ին եւ Իւանէ Ա.ին, «յորոց առաջի սնեալ եւ զարդա[րե]ալ, ի նոցին ողորմութեամբն մեծացեալ եւ փառաւորեալ»[151]։ Այսպիսով, նա Զաքարեան եղբայրների կրտսեր ժամանակակիցն էր, եւ լիովին կապուել էր Շահնշահեան տան հետ Զաքարէ Բ.ի մահից յետոյ։ Եղել էր Զաքարէ Բ.ի որդի Շահնշահ Ա.ի դաստիարակը եւ Շահնշահեան տան մսախուրթուխուցէսը[152]։ Ինչպէս երեւում է թոռան՝ Խաւռաս Բ.ի արձանագրութիւններից, զգալիօրէն ընդարձակել է սեփական կալուածքները՝ Շահնշահ Ա.ից գնումներ կատարելով[153]։

Խաւռաս Ա.ի առաջին կինը՝ «Խութլու Խաթունն յազգէ գոլով պարսիկ, իսկ ի կոչմանէ եւ ի շնորհացն Աստուծոյ ճշմարիտ աղախին գոլով Քրիստոսի», վախճանուել է անդրանիկ որդու մահից (շուրջ 1229 թ., տես ստորեւ) երկու տարի յետոյ, մօտաւորապէս 1231 թուականին։ Թաղուել է Բագնայրի տոհմական հանգստարանում։ Նրանց յիշատակին էլ Խաւռաս Ա.ն Հոռոմոսի վանքում ընդօրինակել է տուել նշանաւոր Բագնայրի Աւետարանը[154]։

Երկրորդ կինը՝ Զմրուխտ Խաթունը դարձեալ մահմեդական էր, նշանաւոր տոհմից, եւ ամուսնանալուց յետոյ քրիստոնէութիւն էր ընդունել։ Ամուսինները, բացի Բագնայրի Աւետարանից, հռչակաւոր Իգնատիոս գրչին պատուիրել են եւս մէկ Աւետարան, որի ծաղկման համար անհրաժեշտ ոսկին շնորհել է Զմրուխտ Խաթունը[155]։

Հաղբատում, Ամիր–Քուրդ եւ Դաւիթ Մահկանաբերդցիների գերեզմանների կողքին, կայ եւս մի տապանաքար՝ «Խաւռաս» եւ նախորդին անմիջապէս կից՝ «Հասան» մակագրութիւններով[156]։ Եթէ այդ տապանաքարը պատկանում է Խաւռաս Ա.ին, ստացւում է, որ նա կրել է «Հասան» կրկնանունը եւ գերադասել է յուղարկաւորուել հին տոհմական հանգստարանում, քան ընտանեկան տապանատանը՝ Բագնայրում։

2. Սասնա Ա., որդի Խաւռաս Ա.ի (ծնուել է, ամենայն հաւանականութեամբ, ԺԳ. դարի սկզբում–մահացել է շուրջ 1229 թուականին)։ Նրա «կիսաւրեա» հասակում մահանալը արձանագրուած է Բագնայրի Աւետարանի յիշատակարանում եւ Բագնայրի վիմագրերից մէկում, որը թողել է մայրը[157]։ Բագնայրի վիմագիրը կազմուել է ՈՀԲ (1223) կամ ՈՀԸ

(1229) թուականին։ Հաշուի առնելով այն հիւսկէն ժամանակագրութիւնը, որն ուրուագծուում է Բագնայրի Աւետարանի յիշատակարանի հիման վրայ (1229 թուականին վախճանուում է Սասնան, երկու տարի յետոյ՝ մայրը, յաջորդ տարում նրանց յիշատակին ձեռագիր է ընդօրինակուում) գրեթէ անվերապահօրէն ընդունելի է թուում երկրորդ տարբերակը[158]։

Սասնայի կինն էր Թայիկ «թագուհի»ն, «որ է զարմ եւ շառաւեղ թագաւորացն Հայոց»[159]։ Դժուար է ասել, թէ Կիւրիկեանների կամ Բաղաց արքայազունների հետ խնամիական կապ ունեցող տոհմերից որի՞ց էր սերում Թայիկը։

3. Վասակ, որդի Խաւռաս Ա.-ի (ծնուել է, հաւանաբար, ԺԳ. դարի սկզբում—մահուան ժամանակը պարզ չէ)։ Թէեւ հայրը նրան «սիրելի որդի» է համարում 1232 թուականին[160], այնուամենայնիւ նա բոլորովին էլ Խաւռաս Ա.-ի տիրոյթների միակ ժառանգորդը չի դարձել։ Ինչպէս երեւում է Բագնայրի 1260ական թուականների արձանագրութիւններից, տոհմական կալուածքների զգալի մասն անցել էր Սասնայ Ա.-ի որդի Խաւռաս Բ.-ին[161]։

4. Խաւռաս Բ. (ծնուել է մինչեւ 1229 թուականը—մահացել է 1266 թուականից յետոյ)։ Ցայտնի է յօգուտ Բագնայրի վանքին կատարած շռայլ նուիրատուութիւններով։ Մասնաւորապէս, ուշագրաւ է այդ խոշոր վանական կենտրոնին 1266 թուականին «զգանձագին զՋրձորիկ վանքն իւր սահմանաւքն ջաղացովն եւ պահիզան» ընծայելու փաստը[162]։ Բագնայրին տրուած Աշնակ գիւղը Խաւռաս Բ.-ն հարկադրուած է եղել վերստին գնել Շահնշահ Ա.-ից։ Հարցն այն է, որ թէեւ այդ գիւղը Խաւռաս Ա.-ն «գնել էր» ու տուել թոռանը, այնուամենայնիւ պապի մահից յետոյ, ինչպէս երեւում է, պատրոնը ներկայացրել է իր իրաւունքները։ Խաւռաս Բ.-ն կրկին գնել էր Աշնակը՝ կնոջ «զբաժինքն ակն ու մարգարիտ»ն վճարելով[163]։

Խաւռաս Բ.-ի անդրանիկ որդի Սասնա Բ.-ն մահացել է մանուկ հասակում, 1261—62 թուականին[164]։

Խաւռասեանների տոհմածառը ըստ Բագնայրի Աւետարանի յիշատակարանների եւ Բագնայրի վիմական արձանագրութիւնների.



Մահկանաբերդցիների աւագ տոհմաճիւղն առայժմ ներկայանում է հետեւեալ տեսքով.



ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Վազգէն Յակոբեան, «Դաւիթ Քոբայրեցու Յիշատակարանը», ***ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր*** (հասարակական գիտութիւններ), 1952, թիւ 8, էջ 120, ծ. 1. Աշոտ Յովհաննիսեան, ***Դրուագներ հայ ազգագրական մտքի պատմութեան***, գիրք Ա., Երեւան, 1957, էջ 213–214:
2. Cyrill Toumanoff, ***Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de la caucasie chretiene*** (Arménie-Géorgie-Albanie), Roma, 1976, p. 94-95.
3. B. Limper, ***Die Mongolen und die christlichen volker des Kaukasus,*** Köln, 1980, s. 227-231.
4. Հայր Միքայէլ վրդ. Չամչեանց, ***Պատմութիւն Հայոց***, հ. Գ., Վենետիկ, 1786, էջ, 257–258. Գարեգին Կաթողիկոս Յովսէփեան, ***Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ***, Անթիլիաս, 1969, էջ 11, 50 եւ յտգ.: Ուշագրաւ է, որ գիտնականը Ամիր Քրդին եւ Սադուն Բ.ին կոչում է նաեւ «Մահկանաբերդի իշխաններ», որը «Մահկանաբերդցի» անուանման ընդարձակ տարբերակն է: Տոհմի անդամներին մեծ մասամբ Արծրունի է անուանում նաեւ Աշոտ Յովհաննիսեանը (Յովհաննիսեան, էջ 52, 167, 213–215 եւ յտգ.):
5. Ծ. Մեսխիա, ***Ներքաղաքական կացութիւնը եւ պաշտօնական կառուցուածքը XII դարի Վրաստանում***, Թբիլիսի, 1979, էջ 277. Ի. Անթելաւա, ***Վրաստանի կենտրոնական եւ տեղական կառավարումը XI-XIII դարերում***, Թբիլիսի, 1983, էջ 219–226 (վրացերէն):
6. ***Քարթլիս ցխովրեբա***, հ. 2, Թբիլիսի, 1959, էջ 237, 248, 257, 269 (վրացերէն): Յետագայ

էջերում վրացի պատմիչը Սադուն Բ.ին յիշատակում է սոսկ անունով կամ էլ՝ «Սադուն աթաբէկ» ձեւով:

7. Ստեփանոս Օրբելեան Արք. Սիւնեաց, ***Պատմութիւն Նահանգին Սիւնեաց***, Թիֆլիս, 1910, էջ 337, 355, 384, 426:
8. Կարօ Ղաֆադարեան, ***Յովհաննաւանքը եւ նրա արչանագրութիւնները***, Երեւան, 1948, էջ 83. նոյնի՝ ***Սանահնի վանքը եւ նրա արչանագրութիւնները***, Երեւան, 1957, էջ 127, 141:
9. ***Դիւան հայ վիմագրութեան***, III, Երեւան, 1967, էջ 56, 80. ***ԺԳ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ***, կազմեց Լ. Խաչիկեան, Երեւան, 1950, էջ 374–375:
10. Օրբելեան, էջ 426:
11. Ի դէպ, որոշ դէպքերում նոյն իրավիճակն է տիրել նաեւ միջնադարում, միեւնոյն տոհմը մերթ իր անուանումը ստացել է հիմնադրի կամ որեւէ նշանաւոր ներկայացուցչի անունից, մերթ էլ՝ հիմնական կամ սկզբնական տիրոյթի: Օրբելեանը, օրինակ, Սիւնիքի մի մասի ազատագրմանը մասնակցած Ախթամարին կոչում է «Առփայեցի» ելնելով նրա Արփա գիւղի տէրը լինելու փաստից, իսկ քիչ անց, «Ախթամարեան զարմ» է անուանում տոհմի յաջորդ սերունդներին (Օրբելեան, էջ 350, 368, 491):
12. Գրիգոր վարդ. Ակներցի, ***Պատմութիւն Թաթարաց***, Երուսաղէմ, 1974, էջ 42, 48:
13. Մխիթար Այրիվանեցի, ***Պատմութիւն Հայոց***, Մոսկուա, 1860, էջ 68:
14. Սուրէն Երէմեան, ***Ամիրսպասալար Զաքարիա Երկայնաբազուկ***, Երեւան, 1944, էջ 11: Այս տեսակէտն ընդունել են նաեւ վրացի հետազօտողները (Մեսխիա, էջ 277. ***Անթելաւա***, էջ 223):
15. ***Սանահնի վանքը***, էջ 125:
16. Կիրակոս Գանձակեցի, ***Պատմութիւն Հայոց***, աշխատասիրութեամբ Կ. Մելիք–Օհանջանեանի, Երեւան, 1961, էջ 386:
17. Մովսէս Խորենացի, ***Պատմութիւն Հայոց***, քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, աշխարհաբար թարգմանութիւնը եւ մեկնաբանութիւնները Ստ. Մալխասեանի, լրացումները Ա. Սարգսեանի, Երեւան, 1981, էջ 85, 125:
18. Ի. Ջաւախիշվիլի, ***Վրաց ազգի պատմութիւն***, հ. 3, Թբիլիսի, 1966, էջ 367 (վրացերէն):
19. Հրաչեա Աճառեան, ***Հայոց անձնանունների բառարան***, հ. Ե, Երեւան, 1962, էջ 223–226:
20. ***Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԳ. դար***, կազմեց Ա. Մաթեւոսեան, Երեւան, 1984, էջ 178:
21. ***Նոյն***, էջ 179:
22. Հայր Ղեւոնդ Վ. Ալիշան, ***Հայապատում***, հ. Բ., Վենետիկ, 1901, էջ 389:
23. ***Քարբլիս ցխովրեբա***, հ. 1, Թբիլիսի, 1955, էջ 344 (վրացերէն). Սամուէլ Քահանայ Անեցի, ***Հաւաքմունք ի գրոց պատմագրաց***, Վաղարշապատ, 1893, էջ 125. Վարդան Արեւելցի, ***Պատմութիւն տիեզերական***, Մոսկուա, 1861, էջ 156:
24. Հայրապետ Մարգարեան, ***Հիւսիսային Հայաստանի եւ Վրաստանի ԺԲ. դարի պատմութեան մի քանի հարցեր***, Երեւան, 1980, էջ 54–55, 90–92:
25. Սուրէն Երէմեան, "Юрий Боголюбский В Армянских И Грузинских Источниках" (Եուրի Բոգոլիուբսկին հայկական եւ վրացական աղբիւրներում), ***Գիտական աշխատութիւններ Երեւանի պետական համալսարանի***, հ. XXIII, Երեւան, 1946, էջ 399 (ռուսերէն):
26. Անթելաւա, էջ 223–224:
27. ***Դիւան հայ վիմագրութեան***, VI, Երեւան, 1977, էջ 199:
28. ***Դիւան***, VI, էջ 5, 108–110, 132–135:

29. Հ. Եղիազարեան, «Աշտարակ», *Էջմիածին*, 1966, Թ.–Ժ., էջ 96–97:
30. *Դիւան*, VI, էջ 204:
31. Եղիազարեան, «Աշտարակ», *Էջմիածին*, 1966, Ը., էջ 58–59. Սուրէն Աւագեան, *Վիմական արձանագրութիւնների բառարանութիւն*, Երեւան, 1978, էջ 42–43, 336:
32. Ռ. Կինկնաձէ, *Վրաստանի պատմութեան աղբիւրագիտութեան հարցեր*, հ. 1, Թբիլիսի, 1984, էջ 171–173 (վրացերէն):
33. *Դիւան*, VI, էջ 139:
34. *Նոյն*, էջ 64–65. Գանձակեցի, էջ 215:
35. *Նոյն*, էջ 158–159. Գանձակեցի, էջ 215–216:
36. Գ. Սարգսեան, «Շխմուրատի վանքը», *Էջմիածին*, 1956, Գ., էջ 20–28:
37. *Դիւան*, VI, էջ 134: Համապատասխան արձանագրութիւնները հրատարակուած են միեւնոյն հատորում:
38. Կարօ Ղաֆադարեան, *Հաղբատ*, Երեւան, 1963, էջ 188–189:
39. *Նոյն*, էջ 152:
40. *Յիշատակարաններ, ԺԳ. դար*, էջ 178–179. Հ. Ղեւոնդ Վ. Ալիշան, *Շիրակ*, Վենետիկ, 1881, էջ 116:
41. *Քարբլիս ցիսվրնբա*, հ. 2, էջ 272. *Վրաց ժամանակագրութիւն (1217–1318)*, թարգմանութիւնը Պարոյր Մուրադեանի, Երեւան, 1971, էջ 142:
42. Ե. Մետրեւելի, *Նիւթեր Երուսաղէմի վրաց գաղութի պատմութեան վերաբերեալ*, Թբիլիսի, 1962, էջ 103 (վրացերէն):
43. Պարոյր Մուրադեան, *Հայաստանի վրացերէն արձանագրութիւնները*, Երեւան, 1977, էջ 182–184:
44. *Հայապատում*, հ. Բ., էջ 350–351:
45. *Նոյն*, էջ 390. Գանձակեցի, էջ 208:
46. Մատթէոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, Վաղարշապատ, 1898, էջ 425. հմմտ. Մարգարեան, էջ 145–147:
47. *Հայապատում*, հ. Բ., էջ 351:
48. Նոյն տեղում:
49. *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Ե.–ԺԲ. դդ.*, աշխատասիրութեամբ Ա. Մաթեւոսեանի, Երեւան, 1988, էջ 224:
50. Շ. Մեսխիա, «Թամարի առաջին պատմիչի մի տեղեկութեան ընկալման շուրջ», *Վրացական աղբիւրագիտութիւն*, հ. 3, Թբիլիսի, 1971, էջ 130–147 (վրացերէն):
51. *Սանահնի վանքը*, էջ 104:
52. *Դիւան*, VI, էջ 139:
53. *Նոյն*, էջ 37:
54. *Հաղբատ*, էջ 188:
55. *Յիշատակարաններ, ԺԳ. դար*, էջ 178:
56. Գանձակեցի, էջ 210:
57. Նոյն տեղում:
58. *Յիշատակարաններ, ԺԳ. դար*, էջ 178:
59. *Դիւան հայ վիմագրութեան*, I, Երեւան, 1966, էջ 57:
60. Նկատի ունենալով բնութագրական անունը՝ հետազօտողները յաճախ Մահկանաբերդցի են համարում նաեւ ԺԲ. դարի 60ական թուականներին Գէորգի Գ.ի կողմից Անիի քաղաքապետ նշանակուած Սաղունին (*Շիրակ*, էջ 100. *Խաղբակեանք*, էջ 2. Բ. Առաքելեան, *Քաղաքները եւ արհեստները Հայաստանում IX-XIII դդ.*, հ. 2, Երեւան, 1964, էջ 166): Այս վարկածը, սակայն, կարող է նաեւ առարկութիւն յարուցել. դժուար է ենթադրել, որ 1160 թուականին հարեւան մահմեդական ամիրայութիւնների բանակը դէպի Վրաստան առաջնորդած Վասակ Մահկանաբերդցու ազգականին

մէկ–երկու տարի անց հնարաւոր էր այդքան կարեւոր պաշտօն վստահել: Բացի այդ, դժուար է պատկերացնել, Սադունը քաղաքապետի տեղը Մահկանաբերդցիների տոհմածառում: Ուստի Սադունների շարքը նրանով սկսելը եւ Մահկանաբերդցիների թուին նրան դասելը (տես՝ Յարութիւն Քիւրտեան, «Իրլանտայի Տըպլինի Մատենադարանին Հայերէն Ձեռագիրները», ***Սիոն***, 1972, էջ 166. Toumanoff, էջ 94–95) վաղաժամ է թւում:

61. Սարգսեան, էջ 26: Արձանագրութիւնը գրուած է «Յամի:Կ:երորդի:Ե:ե[ր]որդի նորս շրջագահս»: Այսինքն՝ հայոց փոքր թուականի 65րդ տարում: Բացառիկ հազուադէպ իրողութիւնն այն է, որ հայոց փոքր թուականի սկիզբ է դիտուած 1116 թուականը, հետեւաբար վիմագիրը թուագրում է 1181 թուականով (***Դիւան***, VI, էջ 159):
62. ***Դիւան***, VI, էջ 158–159:
63. Գանձակեցի, էջ 215:
64. ***Յիշատակարաններ, ԺԳ. դար***, էջ 183: Ձեռագիրն այժմ պահւում է Դուբլինում: Յ. Քիւրտեանը կարծում է, որ Աւետարանը ընդօրինակուել է ԺԲ. դարի 90ական թուականներին Նոր Գետիկի Նորաշէն վանքի համար (Քիւրտեան, էջ 165–169):
65. Գանձակեցի, էջ 215:
66. ***Ցուցակ ձեռագրաց Նոր–Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանաց բանգարանի***, հ. Բ., կազմեց Լ. Մինասեան, Վիեննա, 1972, էջ 183:
67. ***Հաղբատ***, էջ 188:
68. Գանձակեցի, էջ 215–216:
69. Նոյն տեղում. ***Դիւան***, VI, էջ 65:
70. ***Դիւան հայ վիմագրութեան***, V, Երեւան, 1982, էջ 198–199:
71. Գանձակեցի, էջ 209, 386:
72. Նոյն, էջ 386:
73. ***Քարթլիս ցխովրեբա***, հ. 2, էջ 237. ***Վրաց ժամանակագրութիւն***, էջ 110:
74. Ռաշիդ ադ–Դին, ***Հաւաքումն տարեգրութեանց***, հ. 2, Մոսկուա–Լենինկրատ, 1960, էջ 60 (ռուսերէն):
75. ***Քարթլիս ցխովրեբա***, հ. 2, էջ 237. ***Վրաց ժամանակագրութիւն***, էջ 110:
76. ***Դիւան հայ վիմագրութեան***, IV, Երեւան, 1973, էջ 13: Սովորաբար կարծում են, որ գրիչը բաց է թողել թուագրման (ՉԷ) տասնատորը (նոյն տեղում. Աւագեան, էջ 279), բայց Սադունի յիշատակութիւնը Խոշաբից յետոյ մտածել է տալիս, որ արձանագրութեան տարեթուի վերանայումը կարող է եւ պարտադիր չլինել:
77. Ռաշիդ ադ–Դին, ***Հաւաքումն տարեգրութեանց***, հ. 3, Մոսկուա–Լենինկրատ, 1946, էջ 49–50 (ռուսերէն):
78. Գանձակեցի, էջ 386: Ըստ պատմիչի, մոնղոլների եւ սասունցիների միջեւ ձեռք բերուած պայմանատրուածութիւնը յետագայում խախտուել է, հետեւաբար Սադունը երկար չի կառավարել Սասունում:
79. ***Քարթլիս ցխովրեբա***, հ. 2, էջ 248. ***Վրաց ժամանակագրութիւն***, էջ 119–120:
80. Ռաշիդ ադ–Դին, հ. 3, էջ 67:
81. Դ. Կացիտնաձէ, «Մի քանի տեղեկութիւն «Ջամի աթ–թաւարիխ»ից Սադուն Մահկանաբերդցու մասին», ***Վրաստանի պատմութեան արեւելեան նիւթեր***, հ. 2, Թբիլիսի, 1979, էջ 67–74 (վրացերէն):
82. ***Քարթլիս ցխովրեբա***, հ. 2, էջ 248, ***Վրաց ժամանակագրութիւն***, էջ 119–120:
83. Մայիս Աղալբեգեան, ***Խաչատուր Կեչառեցի***, Երեւան, 1958, էջ 131:
84. ***Յիշատակարաններ, ԺԳ. դար***, էջ 366. Գարեգին վարդապետ [Յովսէփեանց], «Ջագաւանից ժողովը», ***Շողակաթ***, գիրք առաջին, Վաղարշապատ, 1913, էջ 41:
85. ***Քարթլիս ցխովրեբա***, հ. 2, էջ 257. ***Վրաց ժամանակագրութիւն***, էջ 129:
86. Կիկնաձէ, էջ 188:

87. ***Քարթլիս ցխովրեբա***, հ. 2, էջ 238–239, 244–248. ***Վրաց ժամանակագրութիւն***, էջ 111, 116–120:
88. ***Դիւան***, VI, էջ 71:
89. ***Քարթլիս ցխովրեբա***, հ. 2, էջ 257. ***Վրաց ժամանակագրութիւն***, էջ 129:
90. Կիկնաձէ, էջ 171–173: Սաղունը սեփականեց Դմանիսը՝ յաղթելով վտանգաւոր մրցակցին՝ Ցագանի որդի Իւանէ Աբուլեթիսձէին (տես Պ. Մուրադեան, էջ 235–236):
91. Կիկնաձէ, էջ 171–173:
92. ***Դիւան***, VI, էջ 165, 213:
93. ***Խաղբակեանք***..., էջ 303, 334:
95. Եղիազարեան, «Աշտարակ», ***Էջմիածին***, 1966 Թ.–Ժ., էջ 96–97:
96. Գ. Յովսէփեան, ***Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի պատմութեան***, հ. Ա, Երեւան, 1983, էջ 229–230:
97. ***Դիւան***, VI, էջ 209, 210. ***Հաղբատ***, էջ 193. ***Յիշատակարաններ, ԺԳ. դար***, էջ 496:
98. Սաղունի մահուան տարբեր տարեթուերից, որոնք հանդիպում են հայկական սկզբնաղբիւրներում, առաւել արժանահաւատը Օրբելեանին վերագրուող ժամանակագրութեան 1282 թուականն է (***Մանր ժամանակագրութիւններ***, հ. 1, կազմեց՝ Վ. Յակոբեան, Երեւան, 1951, էջ 45): Վերջերս Կիկնաձէն ցոյց տուեց, որ այդ թուականին է դնում Սաղունի մահը նաեւ ***Վրաց ժամանակագրութիւնը*** (Կիկնաձէ, էջ 178):
99. Գրիգոր վրդ. Ակներցի, էջ 43, 48. ***Հաղբատ***, էջ 193, 197:
100. ***Դիւան***, VI, էջ 205:
101. ***Խաղբակեանք***, էջ 303:
102. Ցագաւանից ժողովը, էջ 26–27, 41:
103. ***Քարթլիս ցխովրեբա***, հ. 2, էջ 272. ***Վրաց ժամանակագրութիւն***, էջ 142:
104. ***Նոյն***, էջ 273. ***Վրաց ժամանակագրութիւն***, էջ 142:
105. ***Նոյն***, էջ 278. ***Վրաց ժամանակագրութիւն***, էջ 147. հմմտ. ***Մանր ժամանակագրութիւններ***, հ. 1, էջ 45:
106. Օրինակ, Ի. Ջաւախիշվիլի, էջ 366–369. Յովհաննիսեան, էջ 213–214:
107. ***Հաղբատ***, էջ 188:
108. «Աշտարակ», ***Էջմիածին***, 1966, Թ.–Ժ., էջ 97:
109. Կիկնաձէ, էջ 188:
110. ***Քարթլիս ցխովրեբա***, հ. 2, էջ 281. ***Վրաց ժամանակագրութիւն***, էջ 150:
111. Կիկնաձէ, էջ 184:
112. Ռաշիդ ադ–Դին, հ. 3, էջ 103:
113. ***Քարթլիս ցխովրեբա***, հ. 2, էջ 282: Բնագիրը վերականգնել եւ հայերէնի է թարգմանել Պ. Մուրադեանը, տե՛ս ***Վրաց ժամանակագրութիւն***, էջ 150:
114. Պ. Մուրադեան, էջ 228–235:
115. ***Քարթլիս ցխովրեբա***, հ. 2, էջ 284. ***Վրաց ժամանակագրութիւն***, էջ 152, Կիկնաձէ, էջ 184. հմմտ. Ռաշիդ ադ–Դին, հ. 3, էջ 104:
116. Կիկնաձէ, էջ 184:
117. Նոյն տեղում:
118. Անեցի, էջ 164: Ժամանակագիրն այս իրադարձութիւնը դնում է 1302 թուականին, մինչդեռ Դեմետրէ Բ.ն գրաւած պէտք է լինէր Խութլու Թուղայի հայրական կալուածքները մինչեւ 1284 թուականը:
119. Օրբելեան, էջ 426:
120. Ռաշիդ ադ–Դին հ. 3, էջ 114–116:
121. Կարօ Ղաֆադարեան, ***Երեւան***, 1975, էջ 195:
122. Օրբելեան, էջ 426:

123. Ի տարբերութիւն նախորդ մի շարք հետազօտողների, որոնց կարծիքով Սադունի մահից յետոյ նրա փոխարէն աթաբէկ է նշանակուել Տարսայիճ Օրբելեանը, Կիկնաձէն ենթադրում է, որ Տարսայիճը դարձել է ոչ թէ Վրաց թագաւորութեան, այլ միայն Հայաստանի աթաբէկ, այն էլ աւելի ուշ. Մահիր Դիւանի մահուանից յետոյ (Կիկնաձէ, էջ 178–180): Սակայն Տարսայիճ Օրբելեանի իրաւասութիւնների շրջանակը նշելիս պատմիչը ոչ միայն նշում է իր հօր Հայաստանի աթաբէկ լինելը, այլեւ ընդգծում է, թէ Դեմետրէ Բ.ն, «եդ աթաբէկ (Տարսայիճին – Հ. Մ.)ի վերայ ամենայն տէրութեան իւրոյ մինչեւ ի Տփղիս եւ յԱնի եւ ի Կարս: Եւ եդ ի ձեռս նորա զտղայսն իւր՝ զԴաւիթ եւ զՄանուէլն, սնուցանել զնոսա եւ պահել» (Օրբելեան, էջ 426): Աւելի հաւանական է թւում, որ Դեմետրէ Բ.ն, թուլացնելու համար աթաբէկութեան նշանակութիւնը, փաստօրէն բաժանել է գործակալութիւնը երկու մասի:

124. ***Խաղբակեանք***, էջ 303:

125. Կիկնաձէ, էջ 186:

126. Նոյն տեղում:

127. ***Քարբլիս ցիսովրեբա***, հ. 2, էջ 291. ***Վրաց ժամանակագրութիւն***, էջ 158. Ռաշիդ ադ–Դին, հ. 3, էջ 121:

128. ***Քարբլիս ցիսովրեբա***, հ. 2, էջ 289–290, 292–293. ***Վրաց ժամանակագրութիւն***, էջ 157, 159–160. Անեցի, էջ 164 (տարեթիւը խիստ աղաւաղուած է):

129. ***Քարբլիս ցիսովրեբա***, հ. 2, էջ 294. ***Վրաց ժամանակագրութիւն***, էջ 161:

130. Ռաշիդ ադ–Դին, հ. 3, էջ 127:

131. ***Քարբլիս ցիսովրեբա***, հ. 2, էջ 297. ***Մանր ժամանակագրութիւններ***, հ. 1, էջ 149:

133. ***Քարբլիս ցիսովրեբա***, հ. 2, էջ 296. ***Վրաց ժամանակագրութիւն***, էջ 162. Կիկնաձէ, էջ 190–191:

134. Յովհաննիսեան, էջ 254–255, հմմտ. Լեւոն Բաբայեան, ***Հայաստանի սոցիալ–տնտեսական եւ քաղաքական պատմութիւնը XIII-XIV դարերում***, Երեւան, 1964, էջ 332, Հ. Ստեփանեան, ***Հայ ժողովրդի պայքարը թաթար–մոնղոլական լծի դէմ***, Երեւան, 1990, էջ 102–103:

135. Կիկնաձէ, էջ 194–196:

136. Ռաշիդ ադ–Դին, հ. 3, էջ 134:

137. ***Դիւան***, VI, էջ 204–205:

138. Ասղալբեգեան, էջ 129–133:

139. ***Հաղբատ***, էջ 152:

140. Մետրեւելի, էջ 103:

141. Կիկնաձէ, էջ 197:

142. Նոյն, էջ 196–197:

143. Նոյն տեղում: Ս. Աւագեանի կարծիքով, Սադուն Բ.ի որդիներից է նաեւ Պապացը, որը յիշատակւում է Խնձորուտի «Բեմ» խաչքարի արձանագրութիւնում (***Դիւան***, VI, էջ 219–221): Վիմագիրը, սակայն, այնքան է եղծուած (չի ընթերցւում «Սադուն» անունը, «Պապաց» անձնանունանը յաջորդող տառաշարքը քայքայուած է), որ դժուար է միայն նրա հիմամբ եզրայանգում կատարել:

144. Մուրադեան, էջ 177:

145. ***Սանահնի վանքը***, էջ 125:

146. ***Հաղբատ***, էջ 171:

147. Մուրադեան, էջ 182:

148. Օրբելեան, էջ 432:

149. ***Դիւան***, III, էջ 55: Ալիշանը (***Միսակեան***, Վենետիկ, 1893, էջ 114) եւ Գրիգոր Գրիգորեանը (***Սիւնիքը Օրբելեանների օրոք, XIII-XV Դարեր***, Երեւան, 1981, էջ 108–109) Մահկանաբերդցի իշխանուհուն համարում են Սադուն Բ.ի դուստր եւ նշում են

անունը՝ «Ոխթոգ»: Այս տեսակէտը հիմնուած է իշխանուհու ամուսնու վերոյիշեալ արձանագրութեան ալիշանեան հրատարակութեան վրայ (***Միսական***, էջ 114–115), բայց անգամ այստեղ անձնանունը բերուած է որպէս ենթադրական ընթերցում: Արձանագրութիւնը խիստ հողմահարուած է, ուստի Սեդրակ Բարխուդարեանը հրաժարուել է անձնական վերծանման փորձից, իսկ Աճառեանը խուսափել է «Ոխթոգ» անձնանունը ստուգաբանելուց՝ նշելով մէկ անգամ, այն էլ անստոյգ ընթերցմամբ վկայուած լինելու խանգարիչ պարագաները (տես՝ Հ. Աճառեան, ***Հայոց անձնանունների բառարան***, հ. Դ, Երեւան, 1943, էջ 185):

150. ***Խաղբակեանք***, նոր յաւելուած, Ա., էջ 426:
151. ***Յիշատակարաններ, ԺԳ. դար***, էջ 178:
152. ***Նոյն***, էջ 178–179:
153. ***Շիրակ***, էջ 116:
154. ***Յիշատակարաններ, ԺԳ. դար***, էջ 179:
155. ***Նոյն***, էջ 179–180:
156. ***Հաղբատ***, էջ 188:
157. ***Յիշատակարաններ. ԺԳ. դար***, էջ 179. ***Շիրակ***, էջ 116:
158. 1229 թուականին գերադասութիւն են տալիս նաեւ Գարեգին Յովսէփեանը (***Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ***, հ. Ա., էջ 237) եւ Հրաչ Բարթիկեանը (Հ. Բարթիկեան, «Թիւզանդական Ղաւրաս արիստոկրատական ընտանիքի մասին», ***Պատմա-բանասիրական հանդէս***, 1988, թիւ 1, էջ 172 (ռուսերէն):
159. ***Յիշատակարաններ, ԺԳ. դար***, էջ 179:
160. Նոյն տեղում:
161. ***Շիրակ***, էջ 116:
162. Նոյն տեղում:
163. Նոյն տեղում:
164. Նոյն տեղում:

THE PRINCELY FAMILY OF THE MAHKANABERTSIS (SADUNIANS) IN THE 12th-13th CENTURIES

(Summary)

HAYRAPET MARGARIAN

The author devides his research regarding the Mahkanabertsis into five sections: a) Name and origin of the family; b) The nature and scope of their activity; c) Their feuds and connections; d) Their sectarian inclination and ethnocultural imagel; e) Genealogy.

According to the author, the Mahkanabertsi family has a respected place among those who represent the leading feudal families of the 12th-13th centuries Armenia. During its peak in power the members of this family influenced not only Armenia, but played a significant role in the fate of Eastern Georgia, particularly during the decades between 1270 and 1290.

Unlike the other Armenian feudal families of the time, the Mahkanapertsis had singularly strong connections with diverse cultural, sectarian and ethnic factions. Oftentimes they were more active abroad than in Armenia proper.

After thorough and detailed discussions, the author concludes that the family's origins are deeply rooted in a high ranking Armenian family; the family had 2 periods of ascendance: first from 1150-1180, when a member of the family became mayor of Tbilisi (and consequently a predecessor of the Zakarian noble Armenian family); second, during 1270-1290, when the family became allied with the Mongols. Their fuedal holdings and properties were mainly located in northern Armenia; some of them were Armenian Orthodox, others had become Chalcedonic with strong links with the monasteries of Haghpat, Sanahin and Kobayr; they had familial ties with Armenian, Georgian, Iranian, Moslem and Turkish high-ranking families.